



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18461

891-99

S-46



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՈՎԱԼՔ ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑ

ԱՐԴԱՐԱԴԱՏ ԱՂԶԻԿԸ

(ՀԷՔԵԱԹ)

ԳՐԵՑ Մ. ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑ



Գնաց, գնաց սիրահարս
Ս'րոյս ու հողիս մաշելով,
Պիտի նստեմ, ցմա՛ն ողբամ,
Ես անդադար հառաչելով:



ՇՈՒՇԻ
ՏՊԱՐԱՆ ԶՈՒԿՈՒ ՀԱՅՈՑ ՀՈԳԵԿՈՐ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ
• 1891

891.99
S-46

23 հոկտ

3

891.99

S-46

Մ.

Հրատարակիչ՝ Յովսէփ Տէր-Մինասեանց

ԱՐԴԱՐԱԴԱՏ ԱՂԶԻԿԸ

(Հէքեաթ)

ԳՐԵՑ Մ. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑ



Գնաց, գնաց սիրահարս
Սիրտս ու հոգիս մաշելով,
Պիտի նստեմ, ցմառն ողբամ,
Ես անզաղար հառաչելով:



ԾՈՒՇԻ

ՏՊԱՐԱՆ ՇՈՒՇՈՒ ՀԱՅՈՑ ՀՈԳԵԻՈՐ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ

1891

1725

4257

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԵՐԻԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(Գրադրվել)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԵՐԻԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Дозволено Цензурою Тифлисъ, 18-го Февраля 1891 г.

Типографія Шупинскаго Армянскаго Духовнаго Вѣдомства.



4514

41

2003

1891

Ազնուասիրտ եղբայր՝ Յովսէփ Տէր-Մինասեանց.

Ահա քեզ եմ նուիրում այն փոքր պատմութիւնը, — հէքիա՞ծը — որոյ ի լոյս ընծայելու պատճառով անդադար յորդորում էին Բագուլի պատուարժան ուսուցիչներն ու երիտասարդներն: Այս պատմութիւնը թէեւ մեր գրականութեան մէջ չէ կարող նշանաւոր տեղ բռնել, այնուամենայնիւ կարող է իւր չափ օգուտ տալ պատմասէր երիտասարդներին, որոնք ցանկանում են միշտ իրանց ժամանակը ընթերցանութեամբ անցուցանել: Բայց սա լինելով իմ առաջին աշխատութիւնը եւ ես լինելով ոչ բարձր ուսումնական՝ յուսով եմ, որ բարի ընթերցողները ներողամիտ կ'լինին իմ արած սխալանքներին՝ եթէ հաճոյ կ'ընեն ներկայ գրքոյիս: Սրա մէջ յիշուած է նաեւ «Սիրահարների առակը», որոյ միջոցաւ Քսենիֆօնը վճռում է երեք եղբայր դատը: Գուցէ յարգելի ընթերցողներից շատերը չ'հաւատան այդպիսի սիրահարութեան, այդ իսկ պատճառով էլ մտադիր եմ ՚ի լոյս ընծայել եւ մի փոքր սիրահարական պատմութիւն՝ առանձին գրքով, որը տեղի է ունեցել ներկայումս, որ եւ այդ սիրահարութեան հերոսը առանձին դիմելով ինձ՝ խնդրել է ՚ի գիր անցնել իրենց զխով անցած փոքր անցեալը՝ տալով ինձ բոլոր այն նամակները, որ նոքա գրել են միմեանց:

Ուստի ներկայ պատմութիւնը յանձնելով քո բարեսրտութեան, յուսով եմ, որ կ'հրատարակէք, որ եւ նուիրում եմ անկեղծ սրտէ:

Մնամ

Ազգիս ու եկեղեցուն ամենախոնարհ ծառայ եւ եղբայր քո՝ Մինաս Տէր-Մինասեանց:

363 364 365 366 367 368 369 370 371 372 373 374 375 376 377 378 379 380 381 382 383 384 385 386 387 388 389 390 391 392 393 394 395 396 397 398 399 400 401 402 403 404 405 406 407 408 409 410 411 412 413 414 415 416 417 418 419 420 421 422 423 424 425 426 427 428 429 430 431 432 433 434 435 436 437 438 439 440 441 442 443 444 445 446 447 448 449 450 451 452 453 454 455 456 457 458 459 460 461 462 463 464 465 466 467 468 469 470 471 472 473 474 475 476 477 478 479 480 481 482 483 484 485 486 487 488 489 490 491 492 493 494 495 496 497 498 499 500 501 502 503 504 505 506 507 508 509 510 511 512 513 514 515 516 517 518 519 520 521 522 523 524 525 526 527 528 529 530 531 532 533 534 535 536 537 538 539 540 541 542 543 544 545 546 547 548 549 550 551 552 553 554 555 556 557 558 559 560 561 562 563 564 565 566 567 568 569 570 571 572 573 574 575 576 577 578 579 580 581 582 583 584 585 586 587 588 589 590 591 592 593 594 595 596 597 598 599 600 601 602 603 604 605 606 607 608 609 610 611 612 613 614 615 616 617 618 619 620 621 622 623 624 625 626 627 628 629 630 631 632 633 634 635 636 637 638 639 640 641 642 643 644 645 646 647 648 649 650 651 652 653 654 655 656 657 658 659 660 661 662 663 664 665 666 667 668 669 670 671 672 673 674 675 676 677 678 679 680 681 682 683 684 685 686 687 688 689 690 691 692 693 694 695 696 697 698 699 700 701 702 703 704 705 706 707 708 709 710 711 712 713 714 715 716 717 718 719 720 721 722 723 724 725 726 727 728 729 730 731 732 733 734 735 736 737 738 739 740 741 742 743 744 745 746 747 748 749 750 751 752 753 754 755 756 757 758 759 760 761 762 763 764 765 766 767 768 769 770 771 772 773 774 775 776 777 778 779 780 781 782 783 784 785 786 787 788 789 790 791 792 793 794 795 796 797 798 799 800 801 802 803 804 805 806 807 808 809 810 811 812 813 814 815 816 817 818 819 820 821 822 823 824 825 826 827 828 829 830 831 832 833 834 835 836 837 838 839 840 841 842 843 844 845 846 847 848 849 850 851 852 853 854 855 856 857 858 859 860 861 862 863 864 865 866 867 868 869 870 871 872 873 874 875 876 877 878 879 880 881 882 883 884 885 886 887 888 889 890 891 892 893 894 895 896 897 898 899 900 901 902 903 904 905 906 907 908 909 910 911 912 913 914 915 916 917 918 919 920 921 922 923 924 925 926 927 928 929 930 931 932 933 934 935 936 937 938 939 940 941 942 943 944 945 946 947 948 949 950 951 952 953 954 955 956 957 958 959 960 961 962 963 964 965 966 967 968 969 970 971 972 973 974 975 976 977 978 979 980 981 982 983 984 985 986 987 988 989 990 991 992 993 994 995 996 997 998 999 1000

Արարիայի հարուային կողմի յիարնկած քաղաքներից մեկում բնակվում էր մի հարուստ վաճառական։ Արնէն, այսպէս էին կոչում նրան, բաւական խելացի մարդ էր և մեծ հարստութեան տէր։ Չնայած, որ նա բնակվում էր այդ աննշան քաղաքում, այնու ամենայնիւ նա լինելով միայն նշանաւոր խանութարանը, բաւականանում էր առօրեայ աշխատանքով և միշտ էլ գոհ նախախնամութիւնից։ Արնէն ցերեկները կ'գնար ձօն խանութը, կ'հսկէր, կ'նայէր, երբեմն պատուէրներ կ'տար խանութում լինող գործակատարներին, հաշուապահին։ Նա կ' մասնակցէր բարի մարդկանց ժողովներին ու անվրդով հոգով առնէ կ'դառնար և ուրախ ու զոհարթ իր նուարդ կնոջ և հսկեթէն միակ որդու հետ՝ կէսօրին կ'ճաշէր, երեկոյեան կ'ընթերէր և գիշերները հանգիստ ու խաղաղ կ'քնէին։

Արնէն-ապերը իր ազօթքը երբէք չէր մոռանալ։ Նա թէ քնելու, թէ լուացուելու, թէ խանութ գնալու ժամանակ գիտէր և պիտի յաճախ դէպի վեր նայելով կարդար իր ազօթքը։ Սա և իր կին—նուարդը բաւական ծերացել էին։ Սրանց միակ հսկնթէն էր, որ մեծացել և բաւական խելօք երիտասարդ էր դարել։ Սա հեղութեան, առաքինութեան կողմից հօրից պակաս չէր։

Սա գերազանցում էր այդ քաղաքում եղած բոլոր երիտա-

Արարիայի հարուային կողմի յիարնկած քաղաքներից մեկում բնակվում էր մի հարուստ վաճառական։ Արնէն, այսպէս էին կոչում նրան, բաւական խելացի մարդ էր և մեծ հարստութեան տէր։ Չնայած, որ նա բնակվում էր այդ աննշան քաղաքում, այնու ամենայնիւ նա լինելով միայն նշանաւոր խանութարանը, բաւականանում էր առօրեայ աշխատանքով և միշտ էլ գոհ նախախնամութիւնից։ Արնէն ցերեկները կ'գնար ձօն խանութը, կ'հսկէր, կ'նայէր, երբեմն պատուէրներ կ'տար խանութում լինող գործակատարներին, հաշուապահին։ Նա կ' մասնակցէր բարի մարդկանց ժողովներին ու անվրդով հոգով առնէ կ'դառնար և ուրախ ու զոհարթ իր նուարդ կնոջ և հսկեթէն միակ որդու հետ՝ կէսօրին կ'ճաշէր, երեկոյեան կ'ընթերէր և գիշերները հանգիստ ու խաղաղ կ'քնէին։

Արարիայի հարուային կողմի յիարնկած քաղաքներից մեկում բնակվում էր մի հարուստ վաճառական։ Արնէն, այսպէս էին կոչում նրան, բաւական խելացի մարդ էր և մեծ հարստութեան տէր։ Չնայած, որ նա բնակվում էր այդ աննշան քաղաքում, այնու ամենայնիւ նա լինելով միայն նշանաւոր խանութարանը, բաւականանում էր առօրեայ աշխատանքով և միշտ էլ գոհ նախախնամութիւնից։ Արնէն ցերեկները կ'գնար ձօն խանութը, կ'հսկէր, կ'նայէր, երբեմն պատուէրներ կ'տար խանութում լինող գործակատարներին, հաշուապահին։ Նա կ' մասնակցէր բարի մարդկանց ժողովներին ու անվրդով հոգով առնէ կ'դառնար և ուրախ ու զոհարթ իր նուարդ կնոջ և հսկեթէն միակ որդու հետ՝ կէսօրին կ'ճաշէր, երեկոյեան կ'ընթերէր և գիշերները հանգիստ ու խաղաղ կ'քնէին։

սարգներից, թէ գեղեցկութեամբ, թէ խելօքութեամբ, թէ հասակով՝ մի խօսքով այնքան զբաւելչ աստղով էր, ողջ քաղաքը դրա վրայ էր խօսում և դրանով ուրախանում, որ կայ և իրենց մէջ մի այդպիսի երիտասարդ, որ ամբօխի ուշադրութիւնը դէպի իրան է ձգում, որ և երգւում են արևովը*): Սա ունէր մի հարեան, անունը Բաքէ**), որը արիւնասրբութեամբ էր դառել Կսենթէնի հետ, հէնց նրա համար, որ սա այնքան գովվում էր հասարակութիւնից:

Բաքէի թշնամութիւնը Կսենթէնին՝ նաև քաղաքում ոչ ոչ մի մարդու յայտնի չէր:

Կսենթէնը մինչև անգամ չէր էլ կարծում, թէ կ'ըսէ ժամանակ, կ'ունենայ թշնամի:

Մի քանի ժամանակից, յետոյ՝ էրբ Սրնէն ու Նուարդը բաւական ծերացան, կամեցան, իրանց մեռնելուց առաջ՝ ամուսնացնեն իրանց որդուն:

Այս պատճառով էլ կանչեցին իրենց հասակակից բարեկամներին ու զբոսայրերին և մի փառաւոր խնջոյք անելից յետոյ՝ յայտնեցին իրենց խորհուրդը:

Նոքա էլ շատ ուրախացան և իւրաքանչիւրը յայտնեց իր ընտրած աղջկայ տեղը: Վերջապէս՝ երկար ու բարակ խօսելուց յետոյ՝ վճռեցին, որ Ք. քաղաքի աղքատ գերձակ Բօրսօնի աղջիկը—Աֆրոդիէն***) ուղեն՝ որը թէ գեղեցկութեամբ և թէ իմաստութեամբ կարող էր մի հառը լինել:

*) Կուսակաշտութեան ժամանակ՝ որ Աստուծոյ տեղ պաշտում էին արեգակին, սովորութիւն կար մարդկանց մէջ որ երդում էին արեւով եւ շատ ժամանակ մէկ մէկու արեւով երդում, ինչպէս այժմ մենք ասում ենք. ես իմ Աստուծոյ, դու քո Աստուծոյ եւ այլն: Թէեւ այժմ էլ գործ են ածում իբրեւ երդում «իմ արեւս, քո արեւը, նրա արեւը» եւ այլ այս տեսակ երդումներ. քայց սրանք կատարեալ թերահաւատութիւն է եւ ընդդէմ մեր Քրիստոնէական ուղղափառ հաւատին, որովհետեւ տէրն մեր Յիսուս Քրիստոս արդեւ երդուին՝ ասելով. Ձեր խօսքի այոն՝ այո եւ ոչն՝ ոչ լինի: Մատ. ե. 37:

**) Անունը եւս ցոյց է տալիս, որ չար մարդ պէտքէ լինէր:

***) Այս աղջկայ գեղեցկութիւնն ու խելացիութիւնը անհնար է լինում յար-

եղկրագնդի երեսին: Բոլորին էլ հաւանելի եղաւ այս ընտրողութիւնը: Ամբօխը ցրուելից յետոյ՝ ծերունի Սրնէն կանչեց իրան մօտ որդուն և այս պատուէրները տուաւ: «Սիրելի Կսենթէն, իմ սաստիկ ծերութիւնից երեւում է, որ ես շուտով միւս աշխարհը պիտի փոխուեմ, ինչպէս առհասարակ օրէնք է մեծերի: Ես... քանի որ շունչ և ոյժ ունիմ իմ մէջ, ուղում եմ քեզ ամուսնացնել մեռնելուցս առաջ և այդ իսկ պատճառով էլ պէտք է քեզ մի քանի խօսք ասեմ իբրեւ հօր սրբազան պարտականութիւն: Դու ուշադրութիւն դարձրու և լաւ լսիր ինձ և ըմբռնիր ինչ որ ասելու եմ, և որը քեզ աւելի օգտակար կ'լինի: Ես խորհուրդ եմ արել մօրդ և մեր պատուելի բարեկամների հետ և բոլորն էլ ընդունում են իմ խօսքը և յարգում: Ուրեմն դու էլ, սիրելի որդիս, պիտի ընդունիս:

Կ'ընտա Ք. քաղաք, կ'աւանտ աշխուղ գերձակ Բօրսօնի աղջիկը—Աֆրոդիէն, որի գեղեցկութեան համբաւը համարեա աշխարհն է տարածուել եթէ կ'հաւանես, կ'վերցնես քո կինս պահիր և այս պատուէրները:

Աշխատիր միշտ յարաբերութիւն ունենալ կոյսի հետ:

Երկրորդ՝ հացդ միշտ կերակրով ուտել և երրորդ՝ իւրաքանչիւր քաղաքում շինել մի առն՝ որտեղ պատահած ժամանակ կարողանաս անվրդով ու ապահով հանգստանալ իբրեւ սեպհական տան:

Սիրելիդ իմ Կսենթէն, եթէ կ'պահես այս երեք պատուէրը, կ'լինիս աշխարհիս ամենաերջանիկ մարդը: Զառամեալ հօրդ պատուելու համար՝ պահիր և այս յիշածս պատուէրները, որը քո կենաց օգտի համար է: Ուրեմն վերջացնելով խօսքս՝ բարի ճանապարհ եմ մաղթում քեզ, սիրելի՛ որդիս:

Մարացնել հողիղէնների գեղեցկութեան հետ այն ժամանակ եւ այդ պատճառով էլ դրա պատկերը դնելով մահնանների մէջ՝ աստուածացրած պաշտում էին շատ ազգեր գեղեցկութեան հաստատութիւն անուանելով: Երեւի հէնց պատմութիւններում յիշուած «Աֆրոդիտէ» յաստուածուհին այս Աֆրոդիէն է եւ շատ հաւանական է:

ուրեմն գնա՝ և աշխատի՛ր շուտով վերադառնալ, որ գուցէ մինչև դարձդ վերին աշխարհ փոխադրուած լինինք ու գործերդ բացակայութեանդ ժամանակ տակն ու վրայ դարձած»:

Կսենթէնը շատ անգամ էր լսել Ա.Ֆրոդիէի համբաւը և հօր այս խօսքերը լսելով՝ մնաց շուարած:

Այժմ ի՞նչ պատասխան տար հօրը, կամ ի՞նչպէս գնոր Քարլօշ քանի որ ինքն դեռ ևս մտադրութիւն չունէր ամուսնանալու: Վերջ ի վերջոյ շատ մտածելուց յետոյ՝ վրձնեց, որ հօր խօսքը յարգէ:

Պատրաստուեց, ծնողաց ձեռքը համբուրելուց ու օրհնութիւնը ստանալուց յետոյ՝ ճանապարհ ընկաւ: Ճանապարհօրդութեան երրորդ օրն էր՝ երբ անցնում էր մի աւազոտ անապատով: Հեռուից տեսաւ մի փոքրիկ օփաղիս*) ու դրնաց այնտեղ մի քիչ հանգստանալու:

Հասնելով օփաղիսի ծառաստանին, նստեց մի հնադարեան ծառի տակ. մի քիչ սպասելուց յետոյ՝ սառը ջրից խփեց ու լուացուեցաւ:

Բայց հօրը տուած պատուէրները սաստիկ տանջում էին Կսենթէնի ազնիւ սիրտը, որովհետեւ չգիտէր այդ պատուէրների բուն նշանակութիւնը, և սաստիկ մտածելուց ու յոգնածութիւնից Ադամայ թմրութիւնը եկաւ վրան ու քնեց այդ անմարդաբնակ տեղը:

Ահա՛ այդ միջոցը դեռ չքաշած մի ժամ՝ յանկարծ վեր թռաւ տեղից, արորեց աչքերը, երկին լուացուեցաւ ու շարունակեց ճանապարհը դէպի հալաւ-արեւք՝ չմտաբերելով անգամ այն երազը, որից զարհուրած վեր էր թռել քնատեղից:

Անդադար մտածելով իւր ապագայի՝ վրայ շատ վնաց թէ քիչ Աստուած գիտէ, հասաւ մի գեանափոր խրճիթի, ուր բնակվում էր մի գառամեալ և սաստիկ ծերութիւնից աչքե-

*) Օփաղիս ասում են այն տեղին, ուր սնապին տարածեցնումք աւաղոտ դաշտ է և և տեղ տեղ միայն կայ բուսականութիւն եւ մինչև անգամ ծառեր: Այսպիսի տեղեր շատ կան Արարիայում եւ Աֆրիկայում:

րը կուրացած պառաւ: Սա, ինչպէս ասում են Հէքեաթնէրում, հրէշների մայրն էր: Առանց մի որ և է երկիւղ կրելու ողջունեց պառաւի դէմ ու դէմ:

Պառաւը շատ սիրով ընդունեց համեստ երիտասարդի անկեղծ ողջոյնը ու զլուխը վեր բարձրացնելով՝ երեսը դէպի Կսենթէնը բռնելով՝ հարցրեց. «Ի՞նչ, որդի, ինչպէս երեւում է, անփորձ պատանի, ես և այս կողմերը չընկած»:

— Այո, մայրիկ, ձիւտ այդպէս է:

— Բա ո՞ւր ես գնում այս անմարդաբնակ երկրով, որ ես հազիւ թէ տասն տարին մի անգամ տեսնեմ այստեղ ճանապարհորդ, այն էլ կարաւաններով. իսկ դու միայնակ ես գնում:

— Մայրիկ, ինչքան անփորձ եմ ու այստեղերին անձանօթ, երեք այնքան ես անեղիւղ և սրտով եմ, որովհետեւ ես իմ բոլոր յոյսերովս ապաւինել եմ իմ և ամբողջ տիեզերքի Ստեղծողին՝ Ամենագոր Աստծուն և յուսով եմ, որ նա ինձ կարող է ազատել ամենայն փորձանքից ու դէպի բարին տանել. բայց իմ այստեղով գալս ուրիշ նպատակի համար է:

— Ի՞նչ նպատակի համար է, կարելի է արդեօք իմանալ:

— Կարելի է, մայրիկ, բայց խնդրում եմ չ'մերժել իմ խնդիրը:

— Որդի, այն ինչ որ Աստուած ինձ շնորհել է, ես երբէք չեմ խնայիր. ասա՛, ո՞ւր ես գնում և ի՞նչ է քո խնդիրը:

— Իմ հօրս պատուէրն է, որ գնամ Քարլօշ և դերձակ Բարսօնի աջիկ Ա.Ֆրոդիէն ինձ կին վերցնեմ և ի միջի այլոց պատուիրեց պահել իւր տուած երեք խրատն:

Պատմում է հօր տուած պատուէրներն:

— Այժմ ճանաչեցի քեզ թէ ում որդին ես, Արնէի որդին չե՞ս արդեօք:

— Այո, մայրիկ, Արնէի որդին եմ:

— Այժմ լսի՛ր, հօրդ տուած առաջին պատուէրն այն է, որ ասել է. «Աշխատի՛ր միշտ յարաբերութիւն ունենալ կոյսի հետ». Սա նշանակում է պարզ բան. բայց որ ուզում ես

աւելի բաց բացատրութիւն, այս է, եթէ կնոջ հետ պառկես
երկու շաբաթը մի անգամ այն էլ երեկոյեանները, քո կինը
համարեա միշտ կոյս կ'երևի, որ և ճիշտ է այս: Երկրորդն՝
որ ասել է. «հացդ ցամաք չուտես». դա էլ այն է, որ շուայլ
փող չմխես, չափաւորութեամբ ապրես միշտ ի նկատի ու-
նենալով և ապագայի ապրուստը, որ և միշտ կլինի կերա-
կուրդ: Եւ երրորդ՝ որ ասել է. «Ամեն երկրում կամ քաղա-
քում տուն չլինի». նա էլ այն է՝ որ քո բարի վարքովդ, հե-
ղութեամբդ ու խելացի լինելովդ դիւր գաս, այսինքն քաղ-
ցըր երևիս մարդկանց, որով և կ'ճարես ամեն քաղաքում
բարեկամ, որ միւս անգամ այնտեղ ընկած ժամանակը քեզ
յարգէ ու լաւ ընդունէ, որ և կլինի քեզ համար ընդ միշտ
օթեան և այդ է հօրդ պատուիրած տունը: Իսկ եթէ սկսե-
իր միշտ կոյսի մօտ լինել, միշտ քէփով ու խնջոյքով զբա-
ղուել և ամեն տեղ մի տուն չլինել, դա ո՛չ թէ միայն քո,
այլ եթէ երկրագնդի բոլոր թագաւորների հարստութիւնը
քեզ տային, դարձեալ քեզ չէր բաւականանար. երջանկայիշա-
տակ հայրդ այդ մտքով է ասել քեզ, որդի:

—Արքայութիւն քեզ, մայրիկ, որ ինձ համարեա մահից
աղատեցիր. բա Աֆրոդիէն ի՞նչպէս է, արդեօք արժան է
ինձ դժբաղդիս:

—Օ՜հ, Աֆրոդիէն, երկնային անմահ հոգիների արժանի
աղջիկներից գեղեցկագոյնն է և ո՛չ քեզ արժանի: Նա ան-
մահ Զեւսի*) որդեգիրն է և անմահ հոգւոյ է արժանի: Նը-
րանից ծնուածները իմաստութեան հոգւով լցուած կ'լինին
և դու շատ բաղդաւոր կ'լինիս և արժանաւորագոյնը ներ-
կայումս: Որ այդպէս է, ա՛ն քեզ տամ մի կապայ, երբ հագնես
ու մօտ գնաս ամուսնուդ նա տղայ կ'բերէ. ուրեմն քեզ բարի
ճանապարհ, գնա՛ խաղաղութեամբ, Զեւսը օգնէ գործիդ**):

*) Կուպաշտութեան ժամանակ Զեւսը ամենից մեծ չ'աստուածն էր եւ որը ըստ
հին կարծիքի բնակվում էր ամենաբարձր սարի գագաթին, որ ամեն տեղ տեսնու-
հայերը ասում էին Արամազդ, Յոյները Զեւս, իսկ պարսիկները Ուրմիզդ:

**) Նրեւում է, որ պառաւ իբրեւ Աստուած ցանաչում էր Զեւսին:

Կսենթէնը այլ ևս համբերել չ'կարողանալով՝ համբուրեց
պառաւի ձեռքը ու ճանապարհ ընկաւ:

Կսենթէնը այդտեղից առանց մի որ և է արգելքի հա-
սաւ Ք. քաղաք, գտաւ աղջկայ տունը և շատ լաւ ընդունե-
ցաւ Բօրսօնից: Սա էլ իմացաւ Կսենթէնի ում որդի լինելը,
առանց հարց ու փորձի համաձայնուեց ու սկսեց հարսան-
եաց հանդէսը:

Երբ որ Աֆրոդիէն ներկայացաւ Կսենթէնին, վերջինս
նրա գեղեցկութիւնից հրապուրուած՝ հազիւ կարողացաւ իւր
ուշագնացութիւնը զսպել:

Վերջապէս հարսանեաց հանդէսը կատարելուց զինի՝ մեծ
փառքով ճանապարհուցան հարս ու փեսայ հետները բերե-
լով և Աֆրոդիէի համար նաժիշաներ ու անփտանդ հասին
Տիւթամօր քաղաքը, ուր անհամբեր սպասում էին Արնէն ու
Նուարդը և միւս բարեկամները:

Արնէն մեծ շքեղութեամբ ընդունեց պատուական հարս
ու փեսին, եօթն օր հարսանիք արաւ ամենայն տեսակ
նուազարաններով:

Հանդէսը վերջանալուց զինի՝ երբք օր չ'անշած՝ մէկ մէ-
կից յետոյ մեռան Կսենթէնի հայրն ու մայրը և նորապսակ-
ները սգուր գառան և ինչպէս ասում են՝ հարսը դեռ վա-
րագոյրի յետեւում էր և փեսի հետ անգամ չէր խօսած:

Կսենթէնը մեծ պատուով վերցրեց իր սիրելի ծնողնե-
րին, կարգադրեց խանութի բոլոր գործակատարներին ու ին-
քըն՝ մտածեց ուրիշ մեծ և առեւտրականութիւնը ծաղկած
քաղաքների վաճառականների հետ յարաբերութիւն ունենալ:

Այս միտքը նա վճռած համարեց:

Հետեւեալ գիշերը՝ որ առաջուան պէս միայնակ էր քը-
նած, մտածեց հարսի մօտ գնալ՝ մի քանի հարկաւոր պա-
տուէրների տալ ու հեռանալ և հետեւիլ իւր որոշած մտա-
դրութեանը:

Միւս օրը ճաշին ներկայացաւ հարսին, խօսեցին միմե-

անց հետ առաջին անգամ ճաշեցին ու սիրոյ քայքայ ժամերն անցկացրին:

Երեկոյեան դէմ դուրս եկաւ կողք վարձեց տանց հարսին իմաց տալու, ճանապարհորդական բոլոր պիտոյքը հոգաց ու պատրաստելուց յետոյ ներկայացաւ ամուսնուն, գրուեցեցին փոքր ի շատէ և ընթերցին:

Գիշերային խորին լուսթիւնը տիրել էր աշխարհին և Մօրֆէսը *) տարածել էր իւր թևերը ամեն տեղ:

Երկու սիրահարները երկար նստել չհամբերելով պառկեցին կոյս անկողնի մէջ: Ճրագը զրկուեց իւր պայծառ լոյսից և մի քանի լուպէ միմեանց հետ քչփշալեց յետոյ՝ ամենայն ինչ ծածկուեց մթութեան խաւարի մէջ:

Կսենթէնն ու Աֆրոդիէն բաւականացան սիրահարական զուարճութիւններով՝ միայն երեք քաղցր ժամերում:

Սէրը, որ մարդուս կենսատու հրեշտակն է, որ մարդուս կեանքի նեցուկն է ունայն աշխարհումս, որը այո՛, մահը միայն կարող է բաժանել հաստատ սիրահարներին և ոչ ուրիշ մի այլ ինչ, այժմ Կսենթէնը ամենապարզ խօսքովը համարեաւ սրի պէս կտրեց Աֆրոդիէից՝ մաշելով նրա սրտի սիրոյ հզօրագոյն թելերը:

Մի քանի լուպէից յետոյ լուսթիւնը ընդհատեց Կսենթէնը:

— Սիրելիդ իմ Աֆրոդիէ, թէ և քո սէրը հնադարեան ծառի արմատի ծիլերի պէս տարածուել է իմ մարմնի բոլոր երակների մէջ, ամրապնդուել է ինչպէս ամենամեծ սարերի հիմքերը, թէ և մահ է այսուհետեւ իմ քեզանից հեռանալս, հրեշտակափայլ Աֆրոդիէ, այնուամենայնիւ գործի հանգամանքներն ստիպում են ինձ մի առ ժամանակ հեռանալ քեզանից ու թողնել քեզ միայնակ իմ բացակայութեան ժամանակ և ապաւինել Ամենաստեղծիչ Նախախնամութեան ապահովութեանը...

*) Մօրֆէսը քնի հաստում է:

— Այդ ինչ եմ լսում քեզանից, սիրելի Կսենթէն, խօսքը ընդհատեց Աֆրոդիէն, մի՞թէ ես կապասէի քեզանից այդպիսի մահաօրիթ խօսքերը, այն էլ իսկ և իսկ առաջին գիշերում, երբ երեսիդ դժագրութիւնն անգամ չեմ գննած, սիրոյ ժամերն դեռ ես չ'վայելած. ինչո՞ւ արդեօք, այսպիսի կատակներ ես անում մի թոյլ էակի հետ, որպիսին ես եմ:

— Մէհ, պաշտելիդ իմ Աֆրոդիէ, ինչո՞ւ այդպէս շուտով վրդովուեցար իմ խօսքերից. չէ՞ որ գեղեցկութեանդ համեմատ էլ քաջասիրտ պիտի լինիս և ոչ ընդհակառակը— թոյլ:

— Իմ գլխիս փառք ու պարծանք Կսենթէն, դովելի կլիման էր ասածդ՝ եթէ այդպէս վճռած լինէր Վերին Տեսչութիւնը ու այդպէս էլ կարգադրած. բայց աւանդ, գեղեցիկները նոյնքան էլ թուլասիրտ են լինում ու ուշադնաց, որքան նոյնքան էլ թուլասիրտ են լինում ու ուշադնաց, որքան նոյնքան գեղեցիկ են: Մի՞թէ հաւատում ես զանազան պատմութիւնների հերոսուհիներին, որոնց այնքան դովում ու գերադասում են տղամարդկանց կարծութիւնը, երբեք չ'հաւատաս և դու, սիրելի Կսենթէն, որովհետեւ պատմիչ աշընները յաղթուելով այդ սեռի սիրոյ դժուարաշէջ կայծից, չեն իմացել թէ ինչպէս գովեն այդ թոյլ արարածներին, որ կարողանան համակրութիւն ունենալ գեղեցիկ սեռից, ըստ տղաւորական կարծիքի: Պէտք է իմանաս և այն, իմ կեանք Կսենթէն, որ առհասարակ Արարչապետն Աստուած իզական սեռին անհամեմատ թոյլ և վախկոտ է ստեղծել, թէև բացառութիւն կարող են կազմել մի քանիսը, այն էլ ոչ այնքան նշանաւոր և որոնք լինում են չափազանց տգեղ և ոչ թէ գեղեցիկ:

— Հողի-ջան, որ այդքանը կարողանում ես վճռել, ապա ի՞նչ դժուարութիւն է քեզ համար՝ որ թոյլ տաս ինձ հարկաւոր գործոց ու մեր ապրելու համար միջոցներին հետեւելու, որի ձգտումը ամենայն մարդ ունի:

— Այո՛՝ սիրելիդ իմ Կսենթէն, երեւի դա աւելի հարկաւոր է քան սէրը, որի ձգտումը ունի և ամենայն մի շնչաւոր նա

և բուսեղէն արարած, որոնք ամենայն ջերմեռանդութեամբ պաշտպանում են այդ Աստուածադիր օրէնքը. իսկ դու որ այսպէս ես վճռած, այլ ևս ես արգելքի պատճառ չեմ դառնար:

— Ո՛վ իմ կենաց սիրոյ չ'աստուածուհի Աֆրոդիէ, թէ և ինձ համար մահ է քեզանից բաժանուելը, բայց մտադրութեանս սէրը ևս զօրեղ է, հոգիս, աղաչում եմ, չ'նեղանաս ու ապրես այս յարկի տակ, ուր, այո, ամեն ինչ առատ է և ոչ մի բանի պակասութիւն չես գգալ ու չես էլ տրամիր:

Մի քանի լուպէ լուութիւն է տիրում:

— Բայց մի առաջարկութիւն ևս ունիմ, սիրելիք իմ Աֆրոդիէ, լուութիւնը ընդհատելով ասաց Կսենթէնը, որ այն է, ես... մէկ էլ կ'ներկայանամ քեզ, կենացս հրեշտակ, մէկ էլ եկող տարի. այսինքն ուղիղ մի տարուց յետոյ՝ իսկ այս պարզ ժամանակը աւելի ճիշտ որոշելու համար՝ վերցուր այս հաշիւը. մի տարին ունի երեքհարիւր վաթսուն և հինգ օր. ուրեմն մի ժամից յետոյ ես կ'ձանապարհուեմ. իսկ դու վաղուանից կսկսես օրեր համարելը. երբ կ'հաշուես ու կանցուցանես երեք հարիւր վաթսուն և հինգ օրը, ուրեմն իմ ժամանակս է ու երեկոյեան իննը ժամին ինձ կ'ընդունես միայն այն մէկ գիշերը, որ պիտի լուսանայ միւս տարուայ առաջին օրը իսկ ես էլի կ'գամ և այսպէս կ'շարունակուի մեր սէրութիւնը՝ լինելով տարին մի անգամ այն էլ գիշերը մինչև հինգ տարին. իսկ այնուհետև մենք կապրենք միասին՝ եթէ Վերին Նախախնամութիւնը կ'պարգևէ մեզ առողջ կեանք ու գործի յաջողութիւն:

— Ասա՛ խնդրեմ, սիրելի Կսենթէն, վրովր փաթաթուելով ասաց Աֆրոդիէն. մի՞թէ վճռել ես որ տարին միայն մի կամ երկու ժամ լինի մեր քաղցր լուպէները, ու դրանով բաւականանալ մինչև հինգ տարին:

— Այո՛, իմ նազելի, ճիշտ այդքան ժամանակ:

— Իսկ այդպէս անելով՝ արդեօք, պիտի ունենա՞ս ջերմե-

ռանդ ու սուրբ և հաւատարիմ սէր դէպի թշուառ ամուսինդ, որը պիտի կեանքը մաշէ առանց մի որ և է իրի պակասութեան ու դժուարութեան պատճառով:

— Ո՛չ, իմ պաշտելի, ո՛չ, մի՞թէ կարելի է մոռանար, օ՛հ, մոռանա՛ր, այն էլ Դեմի քեզ, որիդ համար սար ու ձոր, աւազոտ ու անմարդաբնակ դաշտեր ոտի տակ տալով եկել քեզ ճարել ու բերել եմ, եթէ մարդ կ'մոռանայ Աստուծոյ ահեղ փառքն ու մեծութիւնը, ես էլ կարող եմ մոռանալ քեզ սիրելի Աֆրոդիէ, ինչ որ մտածելու լինիս, այդ մի՛ մտածիր:

Աֆրոդիէն տեսաւ որ Կսենթէնը այլ ևս մտադրութիւնը չի փոխելով՝ հոգոց հանելով՝ վճռողաբար ասաց. Կսենթէն-ջան, գնա ուրեմն, երբ 'ի սրտէ վճռել ես, միայն պիտի աշխատես՝ որ նամակագրութիւն գոնէ չ'պակսեցնես:

— Դրան ևս մի՛ սպասիր, հոգիս, որովհետև չ'պիտի լինին և նամակագրութիւն ոչ քեզանից և ոչ ինձանից:

Գեղեցիկ Աֆրոդիէի աչքերը արտասուքով լցուեց, չ'կարողացաւ այլ ևս խօսիլ ոչինչ, ու լռելեայն սկսեց լաց լինել առանց Կսենթէնի նկատողութեան:

— Ուրեմն ժամանակ է, լուութիւնը ընդհատեց Կսենթէնը, որ ես ճամբայ ընկնեմ: Ասաց ու վերկացաւ հագնուեց, լուացուեցաւ, ու մօտենալով Աֆրոդիէին՝ ասաց՝ այժմ մնաս բարեաւ, աննմանդ իմ Աֆրոդիէ, մնաս խաղաղութեամբ, ասաց ու սիրոյ մի քանի համբոյրներ տալից յետոյ՝ վերկացաւ, ինչ հարկաւոր էր վերցրեց, տարաւ դուրսը կառապանին տուաւ կառքի մէջ տեղաւորելու, որը սպասում էր դըրսում իսկ ինքն յետ դառնալով ու կրկին փաթաթուելով Աֆրոդիէին մի քանի սիրահարական սրտամաշ համբոյրներ փոխադարձաբար տալ ու ստանալուց յետոյ՝ թողեց Աֆրոդիէն պառկած արքայաժայել անկողնու մէջ և ինքն դուրս գնալով՝ ասաց. Պաշտելիք իմ Աֆրոդիէ, մտաբերիր իւրաքանչիւր լուպէ իմ տուած անկեղծ խօսքերն ու ժամանա-

կր, հաշիւը ձիշտ բռնելով ինձ սպասիր նշանակած ժամին և ոչ մի հոգս անգամ չանես, ես քեզ մատաղ՝ ու սենեակի դուռը փակելով դուրս գնաց քակր՝ ուր սպասում էր կառքը, նստեց ու ծանապարհ ընկաւ:

Մթութեան խաւարի մէջ լսվում էր կառքի անիւների ծնծռոցը, իսկ այդ ծնծռոցի հետ միախառնուելով Աֆրոդիէի սոխականման ձայնի լալազին զողանջիւնը մի քանի ընդհատ, մի տեսակ սրտաբեկ ներդաշնակութիւն կազմելով՝ քիչ ժամանակից յետոյ կտրվեց ու այլ ևս չլսուեց ոչ մի ձայն և որոշ վերջացաւ Մօրթէոսի թեւերի տակ ամենայն ինչ:

Բ.

Գարնանային եղանակն էր: Առաւօտեան փայլուն արեւը դուրս գալուց առաջ՝ ամեն կողմից լսվում էր քաղցրահնչեւ թռչունների դայլայլումները:

Նրանց այդ զմայլեցուցիչ ներդաշնակցութիւնը ապշեցնում էին լսող արարածների սիրահարուած ցանկութիւնները: Կենդանացուցիչ օդը կեանք էր ներս շնչում այդ բոսայէին ամենայն տեղ բացօդեայ գտնուող շնչաւորներին: Դրախտային ծաղիկների խնկահոտութիւնը բուրում էր ամենայն կողմում ու շնչաւորների ռուսիները լայն բանալ տալիս, որ աւելի լաւ զգան այդ երկնային պարգեւաբաշխութիւնները:

Այդ ժամանակ արեւաբացի հօրիզոնը նկարուել էր ոսկեգոյն կարծես օճազով: Այդ բոսայէին բնութիւնը մի գարմանալի տեսարան էր ներկայացնում, այն է՝ շնչաւոր արարածները երեսները դարձրած դէպի այդ կողմը, կարծես ջերմութեամբ փնտրելով պահանջին— արեւի դուրս գալուն էին սպասում, որ սիրոյ և շնորհակալութեան ողջոյն տան այդ օրուայ ապրեցուցիչ եղանակի համար, որին և Վերին Տեսչութիւնը՝ ամենաստեղծիչ Նախախնամութիւնը կարծես

իրան օգնական լինի նշանակած:

Բարեգուշակ թռչնակները ծառերի մատաղ ոստերի վրայ անվրդով նստած, բերանները բաց ու խուփ անելով, թաւանման կարծ՝ փետրիկներով ծածկուած պարանոցները կարծ՝ ու երկար, աջուձախ շրջելով՝ ծլվում էին երեսները դէպի ոսկեգոծ գծերով զարդարուած հօրիզոնը:

Վարկոտ նապաստակները յետի թաթիկների վրայ նստած լիզելով առաջի թաթիկների անցօր մատերը՝ թաց անեղուց յետոյ կամացուկ շփում էին երեսներին լուանալու նպատակով ու մի քիչ այդպէս անեղուց յետոյ՝ յետ կանգնում դէս ու դէն նայում, որ մի գուցէ թշնամի լինի շրջակայքում, անձը ապահով պահելու համար, նոյնպէս երեսը դէպի արեւմտ-գուցը արած: Այնպէս էլ բոլոր արարածները ուրախացած իրանց երջանկութիւնով և բերկրութեամբ լցուած՝ փառաբանում էին Աստուծոյ վեհազոյն սուրբ անօրէնութիւնը: Գիւղացիք էլ որը երեսը լուանում, չոխի կոշտ փեշով սրբում, յետոյ կանգնում երեսը դէպի աղօթարանը ու քթի տակ մրմնջում հեռեւեալ խօսքերը. «Այ սուրբ լոյս, սուրբ առաւօտ, դու մեր առօրեայ պարէնը հասցնես, դու իմ որդեկանց պահես, արեւատութիւն տաս. նրանց դործին յաջողութիւն ու բարեբաղդութիւն, որպէսզի քո ահեղ սրբութիւնը ընդ միշտ պահպանեն անմոռաց. այ ոսկեփայլ ճառագայթները փնտրելի ամեն կողմ սփռող սուրբ արեգակ, ահա այժմ դիմաւորում եմ քեզ առանց մեղք գործելու, որ շաղաթաթախ երեսիդ պարգեւներս թեւամբ նայեմ, ինչպէս որ լուսաւորում ես քո աղամանդեայ ճաճանչներով սարեր, ձորեր, բարձրաւանդակ ու դաշտավայր, ուրախացնում ես քո ստեղծած ամեն արարածներին՝ շնչաւոր կենդանիներին, զեռուններին, սողուններին, միջատներին, ձիւներին, թռչուններին, գազաններին և առհասարակ բոլոր կենդանութիւն ունեցողներին ու կեանք ունեցող մարմիններին, այնպէս էլ քո սուրբ զօրութիւնով հովանաւորութիւն արա աշխարհիս, որպէսզի



զօրութեանդ շնորհիւ լցնուին արմտիքներով ու մրգերով և մեզ պարգևիր երկար ու առողջ կեանք, որ քո սուրբ և ամենաբարձր ու անմահ անունդ Հմուտանք ու յաւիտեանական փառքդ Հպակսեցնենք մինչև կատարած աշխարհի ամէն*) :

Այսպէս աղօթելով ու յաճախ երկրպագութիւն անելուց յետոյ՝ գնում են իրանց գործին:

Այսպէս Աստուծոյ արարածները՝ որը արթուն և որը ջերմ աղօթելով ու Աստուծոյ անունը փառաւորելով սկսել էին յերեկուայ գործերը:

Միայն Աֆրոդիէն էր մահճի մէջ պառկած, զանազան անուրջներով երազում էր քնի մէջ, անգամ մոռանալով իր ամենասիրելի էակին Կսենթէնին, որին բոլոր սրտով նուիրուած էր: Ահա այդ միջոցին էր, որ պայծառափայլ արևի ոսկե-ճաճանչ ճառագայթները Կսենթէնի եռյարկանի տան վերին յարկի արևելեան պատուհանից ներս մտնելով՝ շողքը գցել էին դիմացի դիպակեայ, բիւրաւոր ձևանկարներով ծածկու-

*) Այժմ ոչ թէ մեր հայաբնակ գիւղերում, այլ քաղաքներում անգամ ես նկատել եմ, որ այս տեսակ աղօթք են անում. թէ ծեր, թէ պառաւ, թէ մարդ եւ թէ կին, որոնք, իհարկէ Հկարողանալով որոշել՝ թէ այդ աղօթքով ում են դիմում, արեգակին թէ Աստուծուն, զերազատելով արեգակի զօրութիւնը Աստուծոյ զօրութիւնից: Իսկ դրանց բացատրողը ո՞վ է, եթէ ոչ քահանան, որ դժբախտաբար այդ աստիճան վարդապատ քահանայք չունինք, (եղածներն էլ շատ խոր են թաղում լուելով, որ ժողովրդի կոյրութիւնից օգուտ քաղեն, Հմուտ-ծելով որ իրանք էլ դառնում են նրանցից մէկը ճշմարտապէս), որոնք կարողանան այդ տեսակ մոռ աղօթքները պարզապէս բացատրել, որ մեր տգէտ ու ընչասէր հասարակութիւնը աչք բանայ, որ այլ եւս այդպիսի անելողապաշտու-թիւններ չանէ, թէ աղօթքի ժամանակ երբ մենակ է եւ թէ հասարակօրէն (եկեղեցու մէջ) որ ընդհանրապէս մեր հասարակութեան մէկ մասը իրենց ան-մահ հոգու փրկութիւնը արարածների միջոցով են կարծում, որ այդ միտքը շատ հակառակ է մեր Տէր Յիսուս Քրիստոսի ասածներին, որ Ինքն է միայն Փրկիչ, որ պիտի մեզ Քրիստոնեաներիս յաւիտեանական երանաւետ կեանքին արժանացնէ, որ է հաւասար հոր Աստուծոյ, որ բացի Նա՝ այլ եւս չունինք ոչ որ, որ փրկէ մեզ: Գործ. դ. 7—13

ած պատի ու կախած ահազին Հայելիի վրայ և այդ շաղա-թաթախ շողքը արտափայլելով տարածուել էր արքայապայել սենեակի մեծ մասը, նմանապէս և Աֆրոդիէի զոհարածածկ, ակնակուռ մահճակալի վրայ: Արևի ճառագայթները փոքր ինչ բարձրանալուց յետոյ՝ արտափայլեալ շողքը Համարձակա-բար ընկաւ Աֆրոդիէի երեսի ու մարմարեայ լուսաթաթախ կիսաբաց կրծքի վրայ, որ երազների խաբուսիկ յոյսերի ազ-դեցութիւնից դուրս Հոսուած քրտինքի կաթիլները մարգար-տի կանաչ-կարմիր գոյն էին ստացել:

Երբ որ արևը կամաց-կամաց քաշուեց ու բոլորովին անհետացրեց շողքը սենեակի միջից, Աֆրոդիէն արթնացաւ, կարծես ամեն ինչ մոռացած էր արդէն:

Սա նստելով տեղը՝ ձեռքերը տարաւ դէպի գեղեցիկ երեսը ու արեգականման Հրափայլ աչքերը տրորելուց յետոյ՝ նոր ուշքի եկաւ, որ ինքը ինչ անմխիթար դրութեան մէջ է գտնվում: Վերցրեց մետաքսեայ թաշկինակը, երեսը սրբեց ու տեղը նստած մի քիչ լաց լինելից ու մարգարտի մի քա-նի արտասուքի կաթիլ թափելուց յետոյ՝ վերկացաւ, Հաղ-նուեցաւ լուացուեցաւ ու տխուր ու տրտում նստեց պա-տուհանի առաջ, ձեռքերը նեցուկ տալով կրոր կզակին ու գե-ղեցիկ աչքերը յառած՝ մնաց տան առաջ գտնուող պարտիզի ծաղկած ծառերին նայելիս, ուր և ոստոստում էին անուշ ծովլան ծտերը: Ուրախ էր այդ լուսնին բնութիւնը, ուրախ էր ամենայն արարած և ուրախ էր ամենայն ինչ բայց ու-րախ էր միայն անմահ թագուհի Աֆրոդիէն:

Սա անթարթ աչքերով մի քանի լուսնի նայեց պարտի-զում մի որ և է կէտի վերայ ու յանկարծ մի խոր Հոգոց Հանելով՝ աչքերից արտասուքի կաթիլներ ևս թափելուց յե-տոյ՝ արտասանեց Հետեւեալ լալազին խօսքերը:

Հինաց, գնաց սիրահարս

«Միրտս ու Հոգիս մաշելով»

«Պիտի նստեմ, ց'մահ ողբամ»

«Ես անդադար հառաչելով» :

Դարձեալ արտասուքի մի քանի մարդարտեայ կաթիլներ ցած գլորուեցան նրա գեղեցիկ ու խնձորի պէս պտերի վրայ: Վրդովուած հանեց ջիբից թաշկինակը, սրբեց, կրկին խոր հոգոց հանելով վեր կացաւ մի քանի անգամ սենեակում անցուդարձ արաւ, յետոյ շուռ եկաւ ու նստեց մի շքեղ դահաւորակի վերայ: Այդտեղ ևս մի փոքր սպասելուց յետոյ՝ կանչեց նաժիշտներից մէկին ու հրամայեց թէյ բերելու: Օրից բաւական անցել էր արդէն:

Մի քանի լոպէից յետոյ թէյը պատրաստած ներս բերաւ, դրաւ սեղանի վրայ ու դուրս գնաց:

Թէյի բաժակը պարպելից յետոյ՝ կանչեց նոյն աղախնուն, որին ամենից աւելի էր սիրում և ասաց.

— «Զուժրու՛թ, մի բաժակ թէյ ևս բեր, քեզ հետ պիտի մի քանի կարևոր խօսք խօսեմ:

— Միայն ինձ հէ՛տ, սիրելի տիկին:

— Այո՛, դու առանձին, իսկ նրանք յետոյ կ'գան:

Զուժրու՛թի բացակայութեան ժամանակ Աֆրոզիէն ըսկրսեց ինքն իրան ասել հետեւեալ խօսքերը, սենեակի մէջ անցուդարձ անելով. «Տէր ստեղծիչ, այս ի՞նչ պատուհաս էր, որ դժբախտիս գլուխն եկաւ. քանի որ ես աղքատ գերձակ հօրս ամեն ընչից զրկուած և անշուք խրճիթի յարկի տակ էի անցուցանում օրերս՝ տասնապատիկ ուրախ էի ու չունէի ոչ մի հոգացողութիւն: Այնտեղ իմ հայրենիքն էր, իմ մայրենի աշխարհն ու իմ որբանն. ինչո՞ւ արդեօք հայրս համոզուեց ինձ հեռու աշխարհ տալ մի՞թէ նա չգիտէր թէ ինչ է նշանակում մայրենի հողը: Ախ, ինձ համար սուրբ էին այնտեղի քարերը, թփերն անգամ պաշտելի, ուր իմ ազգականներս ուրախ ու գուարթ են և ես այսքան չէի լինիլ տխուր, որ այժմ, ո՛հ, այժմ ի՞նչ է իմ դրութիւնը... Եարձք, մի՞թէ այսպէս չեն անում և շատ ծնողներ, ասելով. «ապուրուստի տեղ է և տղան էլ լաւ, տանք» ու այսպէս տան-

ջում իրանց զաւակներին» :

Այդ լոպէին մտաւ Զուժրու՛թը թէյի բաժակը ձեռքին: Աֆրոզիէն թէյի բաժակը առնելով՝ ասաց. «Զուժրու՛թ, այժմ ես հարկադրուած եմ իմ սրտի գաղտնիքը քեզ ասելու. իսկ դու, յուսով եմ, որ ինչպէս մի գիւղի հարազատ աղջիկներ ու ընկերակիցներ, մեր ներկայ յարկիս տակ եղած բոլոր բաները կ'մնան բոլորովին գաղտնի, այնպէս չէ:

— Այո՛, ճիշտ այդպէս, անմասնդ իմ տիկին, երբ որ մենք դեռ ևս մեր հայրենիքում էինք և իրար միշտ սիրում ու յարգում էինք անկեղծութեամբ, ես այն ժամանակից ուխտած եմ ց'մահ պահել սրբութեամբ քո պատիւն ու յարգանքը, ո՛ւր մնաց, որ այս օտար երկրումը չ'պահել երանելոյդ սուրբ պատուէրները:

— Սիրելի Զուժրու՛թ, ես գիտէի, որ իմ գաղտնիքը սրբութեամբ կ'պահես և այդ իսկ պատճառով էլ վճռեցի ինքս ինձ քեզ մօտ բանալ իմ սրտի գաղտնիքը: Դու գիտես, Զուժրու՛թ, որ այս գիշեր իմ ամուսինս, ախ, սիրելի Կսենթէնս, գնաց օտարութիւն ինձ մենակ ու անմխիթար թողելով, որ և ժամանակը որոշեց, թէ երբ պիտի գայ. իսկ ես անհամբեր պիտի սպասեմ նշանակած օրին:

Այժմ ես այսպէս եմ մտածել. պէտք է մեր նաժիշտների մէջ կարգ ու կանոն մտցնել և որոշել թէ որը ինչ պիտի անէ...

— Սիրելի տիկին, այդ անհրաժեշտ է, ես ևս մտածել եմ:

— Այո՛, հիմա ի՞նչպէս պէտք է կարգադրել. ես կ'արժում եմ լաւ կ'լինի բոլորին այստեղ կանչել ու անել հարկաւոր կարգադրութիւնը:

— Հէնց այժմ գնամ կանչեմ տիկին:

— Այո՛, կանչիր թող գան ժամանակը հիմա է:

Երկու լոպէ չանցած՝ Զուժրու՛թի առաջնորդութեամբ եւ կան բոլորը, որոնք վեց հոգի էին և Կսենթէնս իր խոհեմութեամբ Աֆրոզիէի երկրից բերել էր այն նպատակով, որ Աֆրոզիէին միշտ մտերիմ ու հաւատարիմ լինին, որպէսզի մի

անակնկալ դէպք պատահած ժամանակ ուղիղ սրտով նայեն ու սրբութեամբ կատարեն բոլոր պատուէրները:

— Սիրելի ընկերակիցներս, ասաց համեստութեամբ Աֆրոդիէն, տեսնո՞ւմ էք այժմ այս տունը, որտեղ ապրում ենք որը թագաւորի պալատից չի մնալ եթէ ես հաւատարիմ մնամ իմ ամուսնուս, դուք էլ հաւատարիմ մնաք ինձ և միանգամայն ծուռ աչքով չ'նայէք ոչ ինձ և ոչ իմ տիրոջ արդար վաստակով ձեռք բերած հարստութեան, հաւատացած եղէք, որ մենք շատ բախտաւոր ու երջանիկ կարող ենք ապրել ց'մահ: Իսկ եթէ Տէրը մի արասցէ, սխալուինք, իմացէք, որ յաւիտեան կորած ենք ու որքան մեր անունը բարձր է յիշվում, տասն այնքան կ'կոտորուի, կստորանայ:

Հաւատացէք, որ չար սատանան միշտ արթուն է և կաշխատէ մեր արգար սիրտը մեղաւորացնելու:

Այժմ ես կ'ամենում եմ ձեզ հետ խօսել մեր մի քանի կարգ ու կանոնի վերաբերեալ, որոնք պատճառ կ'դառնան մեր բարեկեցութեան:

— Ինչ որ կ'ամենում էք, տիկին, մենք ցանկանում ենք մինչև անգամ ձեր անունը յաւիտեան յաւերժացնել ասաց Անգերոնան բոլորի տեղակ:

— Այժմ, սիրելի Անգերինա, մեր բոլոր նաժիշտներն կարող են ասել համարձակապէս, որ դու զեղեցկութեամբդ պակաս չես ինձնից և գովելի ես նաև քո առաքինութեամբ, համեստութեամբ և հաւատարմութեամբդ: Այս պալատի մէջ միայնակ ենք մնացած ու չ'կայ ոչ մի տղամարդ: Կսենթէնն էր միայն, որ նա էլ գնաց այս զիշեր և որպէսզի կարգով անցընի մեզ յանձնուած տան կառավարութիւնը, պիտի կանոնաւորենք ամենայն ինչ այսինքն՝ դու, Անգերոնա, կ'նայես մառանին և լու հաշիւ կ'պահես ինչ որ ելք ու մուտք կ'լինի, որ մի գուցէ մի որևէ անգգոռութիւն պատահի:

Ձայիդան միշտ խոհանոցում կ'լինի և մեզ համար միայն ուտելիք և խմելիք կ'պատրաստէ, իւրաքանչիւր

երեկոյ առօրեայ հաշիւը ճշտութեամբ ներկայացնելով:

Ձոհալը շատ ծարպիկ է և զիտէ զանազան տեսակ խորամանկութիւններ, նա էլ կ'նշանակուի, որ իւրաքանչիւր օրուայ առնելիքը շուկայից նա անէ և ոչ որ իրաւունք չ'պիտի ունենայ ձեռնամուխ լինելու նրա իրաւանց և գործերին:

Ձէյնաբը կ'լինի մեր դռնապանը և միշտ թէ զիշեր թէ ցերեկ կ'հսկէ, որ օտար մարդ ներս չ'մտնէ. իսկ ինչպէս ասացի, բացի Ձոհալը ոչ մէկին թոյլ չտայ դարպասից դուրս գնալու, բացի այն ժամանակ, որ բոլորս միասին դուրս կը գանք զբօսնելու և զուարճանալու արտաքին տեսարաններով:

Ձոհայի ձեռքին կ'լինին այս տան բոլոր սենեակներէ բանալիները, բացի գանձարանի ու իմ ննջարանի, որոնք ինձ մօտ կ'լինին:

Իսկ ինչ վերաբերում է Ձումութիւն, նա ինձ համար վերէն թէյ, ճաշին սեղանը կ'պատրաստէ, երեկոյեան թէյը, ընթրիքը, իմ քնելու տեղերը և զիշերները կ'քնէ ինձ մօտ:

Բայց ինչպէս ասացի, պէտք է աշխատենք ամենայն կերպով զգոյշ կենալ, թէև զգոյշ ենք:

Բայց չար սատանան մեղանից աւելի զգոյշ է:

Այսուհետեւ մեզ մնացել է լինել խոհեմ հեռատես, զգոյշ և համարեա միշտ արթուն, որ մեր տիրոջ մի որ և է առատութիւն և մեր անուանց ստորութիւն չ'լինի»:

Այնուհետեւ բոլոր նաժիշտները ամենայն կիրակի Աֆրոդիէի հետ էին ճաշում և նրա հետ ամբողջ օրը անցկացնում: Քաղաքում բոլորը զիտէին Կսենթէնի բացակայութիւնը. բայց ո՞վ կ'համարձակուէր ծուռ աչքով նայել նրա ունեցածի կամ ընտանեաց վրայ:

Բայց Բաբէն, որ նախանձուած էր դեռ ևս Կսենթէնի կուսութեան—ամուրի ժամանակից, այժմ աւելի զրգոռեցաւ և զանազան հնարներ էր որոնում մի որ և է կերպ մուտք գործել Կսենթէնի տունը, որ կարողանայ մի կերպ բռնաբարել արգար ամուսնու սրբութիւնն և խախտել ա-

մուսնական հաւատարմութիւնը: Սրա տունը մօտ էր Կսենթէի տան և պատը մինչև անգամ կից էր վերջինիս տան պատին: Բաքէն շատ էր աշխատում գիշեր ցերեկ, որ մի որ և է կերպ կարողանար գոնէ մի գաղանիք իմանալ այդ տնից, բայց չէր կարողանում:

Սա տեսնելով՝ որ ոչ կաշառքով, ոչ խաբելով և ոչ խորամանկութիւնով չկարողացաւ տեղեկութիւն իմանալ, մտածեց, որ Աֆրոդիէի ննջարանի հիւսիսային պատը, որը ուղիւ իր բակին է նայում, քանզի այնքան, որ կարողանայ մի փոքր բացուածք թողնել և լսել այդ ծակից նրանց խօսակցութիւնը և մի բան իմանալ:

Ինչպէս մտածեց, այնպէս էլ արաւ: Ննջարանի պատը մի փոքր լուսամուտի չափ քանդելով՝ թողեց համարեա մի ձեռքի հաստութեան չափ տեղ մի քանի ասեղնային ծակերով: Այնպէս որ՝ ներսից աննկատելի էր, և այդ յարմար տեղով իւրաքանչիւր երեկոյ գալիս էր, ականջ դնում:

Այսպէս շարունակելով մի քանի երեկոյ՝ վերջապէս հասաւ այն երեկոյին, որ Աֆրոդիէն իր ննջարանի մէջ խօսում էր Զոււրութի հետ հետեւեալ խօսքերը.

— Սիրելի Զոււրութ, արդեօք երբ պիտի անցնին նշանակած օրերը, որ իմ սիրելի Կսենթէնը գայ ու մի գիշեր ուրախ ժամանակ անցկացնենք:

— Սիրելիք իմ տիկին, երբ պիտի գայ մեր տերը, ժամանակը երբ է:

— Զոււրութ, ինձանից ժամանակ մի պահանջիր, որովհետեւ այդ ժամանակը միայն ես գիտեմ, ինքն Կսենթէնս և Ամենազէտ Աստուածը. այդ ժամանակը անկարելի է մի որ և է աղամորդու յայտնել և քեզ էլ հարկաւոր չէ, սիրելիս:

— Տիկին Աֆրոդիէ, ըստ արժանոյն պահեցէք ձեր որոշած ազնուագոյն պայմանը:

Այս խօսակցութիւնը բոլորը լսեց Բաքէն ու երբ նկատեց՝ որ արդէն քնեցին, ինքն էլ շուռ եկաւ իրան ձեռքով

թոկից սարքած դիւական սանդուխտից և վրդովուած հոգւով գնաց քնելու: Բաքէի համար շատ հեշտ էր այդ տեղով ծակել ու ներս մանել, բայց չէր համարձակուել, մի կողմից հաստատ վախենում էր և միւս կողմից չէր համարձակուում ամօթից, որովհետեւ քաղաքի երկրորդ կարգի իշխաններից ու առևտրականներից մէկն էլ ինքն էր, մանաւանդ՝ որ իր ընկերակիցները բոլոր սրտով շատ էին սիրում Կսենթէնին և նրա ընտանեաց, որ այդ պատճառով էլ չէր կարող եթէ ոչ իսկոյն կարտաքսուէր:

Այժմ նա գիշեր-ցերեկ մտածում էր թէ ինչ հնարքով կարողանար իմանալ նրա ժամանակը, որպէսզի խաբէութեամբ գնար մտադրութիւնն իրագործելու:

Մինչ այս մինչ այն, Աֆրոդիէի ժամանակը հասաւ և բերաւ մի արու զաւակ, որին անուանեցին Իւիս:

Այս լուրը տարածուեց քաղաքում և հասաւ մինչև անգամ Կսենթէի ականջը: Սա էլ այն երկրի սովորութիւնների համաձայն մի շինծու նուռ ուղարկեց իբրեւ ընծայ իր կողմից և աւետիք Աֆրոդիէի:

Երբ որ Աֆրոդիէն նուռը ստացաւ Զոհայից, որին տուել էին քաղաքում, զրաւ սեղանի վրայ, չէր ուզում ուտել, ուզում էր պահել մինչև Կսենթէի գալուստը:

Բաքէն, ինչպէս ասացի, ամեն երեկոյ գալիս էր նշանով քանդած տեղից ականջ դնում, որ իմանայ ժամանակը:

Այն գիշեր պէտք է դար Աֆրոդիէի առաջին և վերջին սիրելին՝ Կսենթէնը, Աֆրոդիէն բոլոր աղախիններին հագցրել էր զեղեցիկ կերպասից պատրաստած հագուստ, բակը, դռները մաքրել էր տուել, բոլոր լապտերները՝ թէ բակի, սրահի և թէ տան պատերից և սիւններից կպցրածները, որոնք գոյնը գոյն նկարներով էր զարդարուած, վառել էր տուել, այնպէս որ թաղաւորի զարդարուն պալատի էր նմանում: Իսկ ինքն այնպէս էր զուգուել-զարդարուել, որ կասէիր մի հրեշտակ էր երկնքից իջած, կամ Շամիրամ թագուհին էր իր պալատի

մէջ փառահեղ բազմած: Մի խօսքով՝ հրաշալի տեսարան էր ներկայացնում այդ ընկերին ողջ տունը:

Թէև Զումրուլթը սովորականին պատրաստել էր թէյը և անհամբեր սպասում էր Աֆրոդիէի հրամանին այդ օրուայ երեկոյին, բայց Աֆրոդիէն էլ ընկեր ան ընկեր սպասում էր ամուսնու գալստեանը, որ միասին թէյ վայելին:

Աֆրոդիէն մերթ նստելով, մերթ վերկենալով՝ անցուղարձ անելով՝ համբերութիւնից դուրս եկաւ:

Վերջին անգամ կանգնեց քաղաքի զիմաց գտնուող պատուհանի առաջ մրմնջաց հետևեալը. «Ո՛հ, Տէր Աստուած, այս երեկոն ամբողջ տարուայ չափ երկարեց, ինչքան անաստուած է եղել ինչո՞ւ արդեօք այսքան ուշացաւ Կսենթէնս, մի՞թէ այսօր վերջին օրը չէ. մի՞թէ նա սխալուած է իւր հաշուամ. ո՞վ գիտէ, գուցէ ես եմ սխալուել...»

Սիրտը չհանգարտուեց և սկսեց դարձեալ հաշուել, որ այդ օրը համարեա 50 անգամ էր հաշուել և ասաց. «Ձէ՛, իմ հաշիւս ուղիղ է»: Եւ դառնալով դէպի նախասենեակը կանչեց. «Զումրուլթ, թէյ բեր»:

Զումրուլթը ներկայացաւ՝ թէյի բաժակը դրած ոտի սկուտելի մէջ:

— Զումրուլթ, վրդովուած ասաց Աֆրոդիէն, չգիտեմ, ես եմ հաշիւս մոռացել, թէ նա, որ չեկաւ:

— Թէյ անուշ արէք, տիկին, ով գիտէ, հաշուին է նայում թէ գործի հանգամանքներին:

Աֆրոդիէն թէյի բաժակը պարպելուց յետոյ՝ ասաց.

— Զումրուլթ, բաւական է, այլ ևս չեմ կամենում. դու էլ շուտով խմիր ու եկ մի քիչ ժամանակ անցկացնենք, չմոռանաս հետդ բերելու և Անգերոնան:

Զումրուլթի բացակայութեան միջոցին Աֆրոդիէն փոքրիկ Իւխսին ծիծ տալուց յետոյ՝ տխուր, տրտում յենուած բազկաթռօր վրայ՝ մտածում էր:

Այդ միջոցին կառքի անիւների ճռճուցի ձայն ընկաւ

Աֆրոդիէի ականջին: Տեղից վեր թռաւ դուրս գալու թէ չէ, ներս մտաւ իսկոյն Անգերոնան՝ ասելով:

— Տիկին, աչքդ լոյս, ուրախչէքս, Կսենթէնը եկաւ և ահա իջնում է կառքից:

— Մեծ ուրախութիւն հաղորդեցիր Անգերոնա. ուրախչէք սիրով կստանաս, սիրելիս, ասաց ու երկուսը միասին դուրս եկան պատշգամբը:

Այդ միջոցին ուրախ ուրախ բարձրացաւ սանդուխտ ներից դէմ յանդիման ուղիղ Աֆրոդիէի երեսին Կսենթէնը, որին հետևում էին երկու կառապաններ, Զումրուլթը և Զոհայը, որոնք բերում էին ձեռքերին Կսենթէնի բերած պարագաները:

Կսենթէնն ու Աֆրոդիէն միմեանց տեսնելուն պէս՝ մոռանալով ամենայն ինչ, զրկախառնուած համբուրւում էին, առանց նկատելու կառապաններին և աղախիններին, և համարեա չէին բաց թողնիլ միմեանց, եթէ փոքրիկ Իւխսի լացի բարձր աղաղակը չխանգարէր նրանց:

Միմեանց ձեռքից բռնած մտան դահլիճը, որտեղից Աֆրոդիէն ընկալելով մտաւ ննջարանը, ուր դրած էր Իւխսի զոհարածածկ օրորոցը: Աֆրոդիէն շտապելով դուրս հանեց օրորոցից մանկանը, մաքուր թաւշեայ շորերը հագցրաւ, Զումրուլթին ասաց թէյ բերելու, որը այդ միջոցին բոլոր պարագայքը գիտեղելուց յետոյ ներս էր մտել և ինքն դարձեալ մտաւ դահլիճը Կսենթէնի մօտ, որը մինչ այս մինչ այն հարկաւոր պատուէրները տալուց, ճանապարհ գցելուց զինի՝ մտել էր դահլիճը:

Այդ երեկոյին ևս Բաքէն անշարժ կանգնած մշտական տեղը, ականջները սրած լսում էր խօսակցութիւնը, որոնք հարկաւոր էին նրան ապագայում:

— Պաշտելիդ իմ Աֆրոդիէ, արդեօք ի՞նչպէս անցկացրիր այս մի ամբողջ տարին, հարցրեց Կսենթէնը:

— Ինչո՞ւ, իմ պահապան հրեշտակ. ինչպէս պիտի անցկաց-

նէի, քանի որ քո հրաբորբոք մագնիտի ոյժ ունեցող սուրբ սէրը անկեղծօրէն թագաւորում է վրաս, ես, կասկած չկայ որ բոլորովին անվրդով կանցուցանեմ^{*)}։

— Այո, սիրելի Աֆրոդիէ, եթէ մեր անկեղծ սէրը չլինի փոփոխական, խօսք չ'կայ, որ անվրդով և երջանիկ կարող ենք ապրել։

Պարպեցին թէյի բաժակները և հրամայեցին էլի բերել։

Մինչև թէյի գալը զրկախառնուեցին, սիրոյ մի քանի քաղցր լուպէներ անցուցին։

Այդ միջոցին Զոււմրուժը ելք բերաւ թէյը, Աֆրոդիէն հրամայեց արժանաւոր ընթրիք պատրաստելու, որը մեկնեց կատարել տիկնոջ պատուէրը։

— Այն ի՞նչ նուռ է սեղանի վրայ դրած, Աֆրոդիէ-ջան, հարցրեց Կսենթէնը չ'ճանաչել ձեռացներով։

— Նա իմ անմոռանալի ամուսնուս ուղարկած ուրախէքն է, որ ստացայ Իւիսի ծնունդը շնորհաւորելու մտքով, դեռ չեմ կտրել մինչև այժմ։

— Մի՞թէ նա իմ ուղարկած նուռն է, պաշտելիդ իմ Աֆրոդիէ։

— Այո, սիրելի Կսենթէն, նա է, քո ուղարկածն է։

— Բա՛ս ո՞ր օրուան համար ես թողել, որ չեմ կերել։

— Սպասել եմ, որ միասին ուտենք, չ'կարողացայ, այժմ բերեմ միասին ուտենք։ Ասաց և իսկոյն վեր առաւ սեղանի վրայից ուղղելով Կսենթէնին, ասաց. «կտրիր»։

— Ինքդ կտրիր, սիրուն Աֆրոդիէ, իսկ ես անթարթ աչքերով թող նայեմ այդ չքնաղ երեսիդ ու պայծառ արեգակնաճաճանչ աչքերիդ։

Աֆրոդիէն ուրախ ժպիտով վեր առաւ սեղանի դանակը, մի տեսակ խանդաղական ակնարկ ձգելով Կսենթէնի վրայ՝ սկսեց կտրել։

^{*)} Կանայք միշտ իրանց անվրդով են ձեռացնում մարդկանց հաճոյանալու համար, թէև միշտ չէ։

Բայց դանակը քաշեց՝ թէ չէ, թանկագին քարերով ու զանազան ակունքներով լցուեց զողը։

— Այս ի՞նչ հրաշք է, ասաց զարմացած Աֆրոդիէն՝ նայելով Կսենթէնին, որը այդ միջոցին զբաղուած էր նայելով մի ինչ որ թղթի վրայ։

— Ոչինչ, իր զարմանքը զսպելով ասաց նա, թանկագին քարեր, մարգարիտներ, գոհարներ և ուրիշ զանազան տեսակ քարեր են թափւում այս նռնից։

— Ի՞նչ ես ասում, ի՞նչպէս կարելի է հասարակ նռնից այդպիսի բան դուրս գայ։

— Ուրտեղից ես ձեռք բերել այս նուռը, սիրելի Կսենթէն, ինչո՞ւ շատ չէիր առնում սրանից։

— Ես ի՞նչ կիմանայի, թէ մի հասարակ հրէայ սխալմամբ կարող էր այդպիսի նռներ վաճառել, երևի ինքն էլ մինչև անգամ չի իմացել, եթէ ոչ նա այդ նուռը, որը ո՞վ գիտէ քանի հազարներ կարժենար, չէր ծախիլ մի չնչին գումարով։

Ասաց Կսենթէնը և վերցրեց այն քարերից մի քանիսը իր ձեռքը, իբր թէ նկատելու մտքով։

— Որ այդպէս է, սիրելի Կսենթէն, մէկ էլ որ պատահես այն հրէային, ասա, այս նռնից մի քանիսը բերէ քեզ վրայ ծախի, որպէսզի դու էլ ուղարկես, ասաց Աֆրոդիէն և ժողովեց բոլորը, ածեց մի առանձին փոքրիկ սնդուկի մէջ փակեց։

Չէնց այդ լուպէին ներս մտաւ Զոււմրուժը՝ ասելով. — Տիկին, ընթրիքը պատրաստ է։

— Սեղանը սարքիր, զինի և քաղցր ըմպելիներից բեր, պատրաստիր շուտ, կէս գիշերը անցաւ արդէն։

Մինչև հինգ լուպէն սեղանը պատրաստ էր, որ Աֆրոդիէն ու Կսենթէնը նստեցին դէմ ու դէմ, սկսեցին միմեանց կենաց խմել, միմեանց երես սիրոյ համբոյրներով ծածկելով՝ ախորժառով ընթրել։

Ընթրիքից յետոյ՝ Զոււմրուժը ժողովեց սեղանը, Աֆրոդիէի մահճակալը դրստեց և դուրս գնաց։

Երբ քնելու ցանկութիւն հասաւ՝ վերկացան երկուսն, Աֆրոդիէին լամպարի լոյսը պակասեցնելով՝ պառկեցին քնելու, միմեանց սեղմելով կուրծք կրծքի, և այլն:

Ար քանի ըրպէ սիրահարութեան չաստուածուհուն նուիրուելուց յետոյ՝ երբ բնութեան պահանջը արդէն կատարուած էր համարուում, սկսեցին քաղցր սրտակտոր խօսակցութիւններ:

— Սիրելի իմ Աֆրոդիէ, ահա՝ կէս գիշերը անցել է արդէն, ես լուսաբացին պիտի գնամ. դու ուրախ կենաս ամենայն կերպ, մինչև որ ես կ'գամ էլի իմ նշանակած ժամանակին. այն է՝ մի ամբողջ տարի մնալուց յետոյ: Նոյնպէս կ'համարեալ էլի երեք հարիւր վաթսուն և հինգ օր և հետեւեալ օրը երեկոյին դարձեալ այստեղ պատրաստ կ'լինիմ. իսկ եթէ ուրիշ ժամանակ դամ, ամենեւին չես ընդունիլ որովհետեւ այս պայմանը իմ մշտական որոշուած ժամանակս է և ես ուրիշ ժամանակ երբեք չեմ դալ:

— Դարձեալ ինձ հալըմաշ ես անում, սիրելի Կսենթէն, դոնէ մի ամիս մնայ մօտս, դոնէ խղճաւ այս անգամ, ծծմայր եմ*), քո զաւակիդ, փոքրիկ Իւխիդ խղճա՛, մի գնալ մի առ ժամանակ. մի՞թէ սիրահարուած, հարազատ և անարատ ամուսինը այդպէս կ'վարուի իր կնոջ՝ մի թոյլ էակի հետ, որ ես եմ:

— Քո դժուարութիւնդ միայն այս անցած՝ առաջի տարին է եղել, հոգուդ մատաղ. իսկ այսուհետեւ թէ քեզ համար և թէ ինձ համար հեշտ և խաղաղ կանցնի ժամանակը, հոգ չէ:

— Դու գիտես, որ ես քո հըն հպատակն եմ ցմահ, ինչպէս կ'ամենում ես այնպէս կ'արգադրի. ես ընդդէմ չեմ և չեմ էլ վշտացնիլ սիրելի ամուսնու ագնիւ և բարի սիրտը:

Այս խօսքերից յետոյ գրկախառնուած քնեցին:

Այդ միջոցին Մօրֆէոսի գիրկը մտած ամենայն արարած՝ խոր քնի մէջ էր ամենայն ինչ բացի մէկը, որ այդ կէս-

*) Թէեւ այն ժամանակ եւս սովորութիւն կար դանակ վարձել, բայց Աֆրոդիէն իր տխուր սիրտը զաւակին ծիծ տալով մխիթարուելու համար՝ դիտմամբ չէր վարձում, որով եւ անց էր կացնում իր դառն օրերը:

գիշերին պատի ճակատից կ'աւծ, կ'արծես մեխուած լինէր, անշարժ ականջը դրած պատի ծակին. լսում էր Աֆրոդիէի և Կսենթէնի քնի շնչոցը, միայն՝ երկար խօսակցութիւնից յետոյ: Սա Բաքէն էր, որը մի ամբողջ տարի ամենայն գիշեր այդ տեղ չորանալուց յետոյ՝ հազիւ կ'արողացաւ հաստատ տեղեկութիւն իմանալ բայց ցաւն այն էր, որ Կսենթէնի պայմանը և ժամադրութիւնը շատ սաստիկ էր: Բաքէին տանջում էր ևս առաւել այդ հրաշալի նշան հանգամանքը, որ ինքը առաւել զարմացել էր՝ քան Աֆրոդիէն:

Առաւօտեան երբ Ագամայ մութը աշխարհն էր բռնել և ծագելուն մօտ էր, մեր կառապանները եկան արթնացրին Կսենթէնին: Սա էլ վեր կացաւ մի քանի անգամ էլի համբուրեց Աֆրոդիէին, Իւխսին և մի քանի հարկաւոր պատուէրներ հարձերին տալուց և իւրաքանչիւրին ընծայ խոստանալով իւր միւս անգամ զալստեան, կառք նստեց հեռացաւ:

Այս անգամ Աֆրոդիէի սիրտը քիչ հանգարտ էր, առաջուպ պէս լաց չէր լինում, թէև տխուր էր առաջուպ պէս:

Բաքէն տեսաւ, որ ամեն ինչ վերջացած է. ցած եկաւ պատից, գնաց ինքն ևս հանգստանալու:

Աֆրոդիէն մի քանի ըրպէ վշտալի մտածմունքից յետոյ քնեց, քնեցին և հարձերը: Լուռ էր այդ ըրպէին ամեն ինչ:

Գ.

Հետեւեալ առաւօտ Աֆրոդիէն սովորականից ուշ զարթեց: Քաղցր քնել էր և Իւխսը: Երբ որ թէյը պատրաստուեցաւ, Զումիութը ներս մտաւ տեսաւ, որ Աֆրոդիէն նոր էր հագնուում, սպասեց ձեռքին ջուր ամփ, ամեն գործ վերջացաւ և դուրս գնաց թէյ բերելու:

Աֆրոդիէն միայնակ մնալով արտասանեց հետեւեալ խօսքերը. «Աստուած իմ, մի՞թէ կեանքս այսպէս պիտի վերջանայ, մի՞թէ ես պիտի մնամ ամուսնութեան սէրի կարօտ,

քանի որ իմ ամուսինը այս քաղաքումը ամենից առաջինը կարող է համարուել՝ խելքով, վեհութեամբ և իր հարստութեամբ. բայց չգիտեմ ինչ սա ուխտադրութիւն է, որ իմ Կսենթէնս այսպէս է անում... Տէր Աստուած, Դու երջանկութիւն տաս մեր տոչորուած կեանքին և մեր վերջը բարի աշնա: Դու Տէր, որ հաստատել ես Քո ամենաբարի տնօրէնութեամբդ այդպիսի սուրբ կարգադրութիւն՝ սէր ամուսնութեան կամ միութեան երկու հոգւոյ այդ սէրի միջոցաւ, ինչո՞ւ արդեօք, թոյլ ես տալիս միմեանց առանց սէրի...»

Սյդ միջոցին ներս մտաւ Զուժրութը, թէյի բաժակը սեղանի վրայ դրեց, շուռ եկաւ դուրս գնալու. բայց Աֆրոդիէն յետեւից կանչեց.

— Զուժրութ, ո՞ւր ես այդպէս շտապում դուրս գնալու, տեսնում ես, որ ինձ վիճակուած է ձեզնով ուրախանալ, դուք էլ ինձ մենակ միք թողիւ. կանչիր Անդերոնային մի քիչ ժամանակ անցկացնենք»:

Երկու ըստէ չանցած՝ մտան Զուժրութն ու Անդերոնան:

— Նստեցէք, Անդերոնա, ասաց Աֆրոդիէն ականարկելով դէպի օթեակը, սա երկրորդ տարին է, դարձեալ պիտի անմխիթար մնամ, այո, և միայն մխիթարուիմ ձեզանով և փոքրիկ Իւսով՝ նրա մանկական ճշումով. դուք այսուհետեւ միշտ ինձ հետ թէյ կ'լսմէք, կ'ճաշէք, ոչ ոք չի խանգարիլ մեր ուրախութիւնը:

— Տիկին, թէև իրաւունք էք տալիս մեզ ուրախանալու և ձեզ ուրախացնելու, բայց ի՞նչպէս կարելի է ձեր տխրութեան ժամանակ մենք համարձակուենք ուրախութիւն անել և ձեզ ուրախութիւն պատճառել կատակերգօրէն... ես կարող եմ Իւլիսին ուրախ պահելու, ասաց Անդերոնան:

— Շնորհակալ եմ այդպիսի խելացիութեանդ, Անդերոնա, մեծ պատիւ է ինձ համար ձեր կողմից, որ ձեր ամենօրեայ ներկայութեամբ ինձ ուրախ պահէք, որ չ'հիւանդանամ:

Այնուհետեւ ամեն օր բոլոր նաժիշտները անխտիր ճաշում էին տիկնոջ հետ և ուրախութիւն անում: Այսպիսի

ուրախութեամբ անցկացրին մինչև իննը ամիս և այդ ժամանակ Աֆրոդիէն բերաւ մի գեղեցիկ մանուկ ևս, որին անունեցին Յաբիս. սա աւելի գեղեցիկ ու առողջ էր քան Իւլիսը:

Տիկնոջ և հարձաց ուրախութիւնը կրկնապատկուեց:

Բայց այսքան ժամանակ Բաքէն դուրս էր եկել այդ քաղաքից և անգաղար պտտում էր ամեն քաղաքներ ու զիւղեր նոնավաճառ հրէային: Սա ուղիղ տասն ամիս ման եկաւ. երբ տեսաւ որ ոչինչ չիմացաւ նրա մասին, ճարահատեալ դարձաւ իր տեղը, որ աեսնէ, թէ այդ անգամ ինչպէս կարող է յաջողութիւն գտնել իր չար մատուցութիւնը կատարելու: Այժմ սա առաջուայ պէս անվրդով չէր իր մատուցութեան մասին, որովհետեւ գիտէր թէ երբ պիտի գայ Կսենթէնը:

Այժմ Բաքէն մտածում էր կախարդական խաբէութեամբ մուտք դործել Աֆրոդիէի մօտ և ասում էր ինքն իրան.

«Այսօրուանից մինչև Կսենթէնի դալստեան զիշերը մնացել է ուղիղ վաթսուն և մէկ օր, որ լրանալու զիշերը պիտի նա գայ. ուրեմն ես պիտի աշխատեմ ինչքան կարելի է Կսենթէնի հագուստի նմանութեամբ ունենալ հագուստ, որ Աֆրոդիէն չ'կասկածի իմ ներկայութեան ժամանակ վարուելի հետս, որպէս հարազատ ամուսնու հետ: Ես ևս բաղաւոր եմ, որովհետեւ ձայնս, խօսակցութեանս եղանակը շատ նման է Կսենթէնի խօսակցութեան. նա այս կողմից ևս չի կասկածիլ իմ վրայ:

Բայց պէտք է միայն մի զիշեր առաջ ներկայանամ, որպէս թէ Կսենթէնն եմ և այնպէս ինձ կրնգունի»:

Յաբիսի ծննդեան լուրը հասաւ Կսենթէնի ականջը, որ անմիջապէս նոյն հրէային շինել տուեց ևս մի նուռ ուղարկեց:

Սյդ նուռը ստացաւ Աֆրոդիէն, որի գոյնը, շինութեան ձևը աւելի հրապուրիչ էր քան առաջինը, որին պահեց զանձի սենեակի մէջ եղած զոհարի հատիկներով լի սնդուկի մէջ:

Այժմ Աֆրոդիէն աւելի ուրախ էր և օրէ օր սպասում էր իր սիրելի ամուսնու — Կսենթէնի գալստեանը:

—Արդէն երեք օրից յետոյ պիտի դայ Կսենթէնը, սիրելի Անգերոնա, ասաց մի երեկոյ Աֆրոդիէն, որի շուրջ պատել էին բոլոր աղախինները, պէտք է վաղուանից սկսէք մաքրել, պատւաստել բոլոր լապտերները և մի խօսքով ինչ հարկաւոր է:

—Սիրելի տիկին, կասկած չ'կայ, որ առաջուանից աւելի լաւ պիտի պատրաստուի ամենայն ինչ պատասխանեց Զոհրան:

Այս խօսակցութիւնը ևս լսում էր Բաքէն, որ կանգնած էր իր պատրաստած ուխտատեղում:

Սա ցած գալով տեղից, ասաց. «Այս անգամ եթէ ինձ կտոր-կտոր էլ անելու լինին, պիտի կեղծ Կսենթէն ձեռացած գնամ ու ներկայանամ վաղը երեկոյեան»:

Միւս օրը Բաքէն գնաց մի կառք վարձեց, տալով կառապանին եռապատիկ վարձ քան կարժենար, պատուիրեց որ նա ձայն հանէ գնալու ժամանակ, թէ եկողը Կսենթէնն է:

Միւս օրը երեկոյեան Աֆրոդիէն դեռ նոր էր վերջացրել առաջին բաժակ թէր, որ ձայն ընկաւ թէ Կսենթէնը գալիս է աւելի շքեղ փառահեղութեամբ քան առաջին անգամ էր եկել: Զոհալը ներս մտաւ ասելով.

—Տիկին, աչքդ լոյս, Կսենթէնը ահա գալիս է:

—Ի՞նչպէս թէ գալիս է, չէ՞ որ նրա ժամանակը վաղն է:

—Զգիտեմ, ահա կառք մտաւ բակը, ասաց ու դուրս գնաց: Աֆրոդիէն մենակ մնալով ասաց. «Տէր Աստուած, այս ի՞նչ է նշանակում, ասիւր նրա ժամանակը այս երեկոյ չէ... ո՞վ գիտէ, ես եմ սխալուել թէ նա»:

Մինչ այս մինչ այն, կեղծ Կսենթէնը աւելի վստահութեամբ, հպարտ ու համարձակ բարձրացաւ պատշգամբը, ուր անհամբեր սպասում էր Աֆրոդիէն:

Երբ յանկարծ տեսաւ Կսենթէն ձեռացեալին, իսկոյն մտաւ սենեակը, դուռը փակեց յետեից ասելով. «Ես քեզ չեմ ճանաչում, որովհետեւ իմ հարազատ ամուսնու տուած ժամանակը չէ այս երեկոն և որոյ պատճառով ես չեմ կարող քեզ ընդունել. եթէ դու իմ ամուսինն էլ լինիս, էլի պիտի սպասես

մինչև վաղը երեկոն, այն ժամանակ քեզ կընդունեմ»:

—Այդ ի՞նչպէս կարելի է, պաշտելի Աֆրոդիէ, մի՞թէ դու կարծում ես թէ չ'գիտեմ, որ վաղը երեկոն է. բայց այս անգամ այսպէս պատահեց. ի՞նչ փութս կունենաք. եթէ այս անգամ մի օր աւելի մնամ մօտդ ու մեր ամուսնութեան քաղցրը, բայց կարօտագին սէրը վայելենք. ես դիտմամբ եմ եկել և կառապանին էլ պատուիրել եմ, որ վաղը զիշերը դան. դուռը բաց արա, հոգիս, կանացի երկչոտութիւնդ մի ցուցնիլ. իսկ եթէ բաց չես անիլ, ուրեմն մնաս բարեաւ, միայն մէկ էլ կսպասես ինձ միւս տարին:

Աֆրոդիէն մնաց շուարած, ի՞նչ պատասխանէր վերջին խօսքերին, եթէ արհամարհէ, դուցէ ամուսինն է, գնայ՝ մէկ էլ պիտի անհամբեր սպասի մի բոլոր տարի. ոնց անէր. վճռեց բաց անէ: Վերկացաւ ասելով. «Դու ինչպէս ասացիր թէ վաղը ևս այստեղ եմ, ուրեմն եկ. բայց մինչև վաղը երեկոյ, չը պիտի անկողնիս մօտենաս, ասաց ու դուռը բացաւ:

Բաքէն ներս մտնելուն պէս զրկախառնուեցան միմեանց երկար ժամանակ չ'բաց թողեցին իրար, բայց Աֆրոդիէն սիրտը մի տեսակ տխրուած՝ կարծես մի ներքին վրդովմունք անհանգիստ էր անում նրան: Նա այնպէս փոխուեց երկու րո-անհանգիստ էր անում նրան: Նա այնպէս փոխուեց երկու րո-անհանգիստ էր անում նրան: Նա այնպէս փոխուեց երկու րո-անհանգիստ էր անում նրան:

—Այժմ ասա ինձ ճշմարիտը, սիրելի Կսենթէն, ի՞նչն էր ստիպել քեզ, որ ժամանակազանց դաս ինձ անհանգիստ անես:

—Պաշտելի իմ Աֆրոդիէ, այս տարի գործոց հանգամանքը այդպէս վճռեց, որոյ պատճառով մի օր առաջ կարողացայ գալ և սիրոյդ երկրորդ անգամ արժանանալ:

—Այդ փոյթ չէ մէկ օր առաջ գալդ. բայց պայմանադանց լինելն լաւ բան չէ, դա կարող է գայթակղեցնել անփորձ ամուսնու:

—Ես չ'գիտեմ ինչ տեսակ գայթակղութիւն ես ասում. դուրանց պէս խօսքերը թող մնան: Դու միայն պատուիրիլ ընթերցե՛ք պատրաստեն, չափազանց յոգնած եմ:

— Գիտե՞ս, Աֆրոդիէ-Ջան, ինչքան ճանապարհ եմ կտրել այս երեք օրուայ ընթացքում:

Աֆրոդիէն իբրև պատասխան միայն լուռ ժպտալով հընչեց զանգը, որ ներս մտաւ Զուժութիւնը և հարցրեց.

— Ընթրիքը պատրաստ է՞ Զուժութիւն:

— Այո, տիկին, պատրաստ է, ձեզ եմ սպասում:

— Ուրեմն սեղանը պատրաստ բեր, ինչ հարկաւոր է:

Զուժութիւնը առանց ընդհանրացումի կորցնելու՝ պատրաստեց ամեն ինչ: Երկու սիրահարները երբ ախորժակով ընթրեցին, Զուժութիւնը ժողովեց զնաց ննջարանը, պատրաստեց մահիճը նրանց քնելու համար: Այդ միջոցին Աֆրոդիէն կանչեց Զուժութիւնն ասելով. առանձնասենեակում մի տեղ պատրաստէ:

Զուժութիւնը այն ևս պատրաստեց:

Երբ քնելու ժամանակը եկաւ, Աֆրոդիէն ասաց Բաքէին, «սիրելի Կսենթէն, այս զիշեր դուք քնեցէք առանձնասենեակում, իսկ վաղը երեկոյեան կ'քնենք միասին»:

Բաքէն ուրախութեամբ կսպասէր եթէ իմանար թէ Կսենթէնը չի դարբայց վերջինիս որոշած ժամանակն էր վաղը երեկոն, այդ պատճառով էլ սաստիկ տխրուեց ասելով. «Պաշտելիդ իմ Աֆրոդիէ, արդեօք ինչպիսի սիրտ պէտք է ունենար, որ համբերեմ մինչև վաղը. միթէ դա կարելի է, դու խօսնած հետ այդպիսի պայման չես դրել և այժմ դրժում ես: Ես գիտմամբ մի օր առաջ եմ եկել, որ ուրախ ժամանակ անցկացնեմք. տես, Աֆրոդիէ, ես կ'գնամ հէնց այս րոպէիս, միւս անգամ իմ դալուստը երկու ամբողջ տարի կուշացնեմ, որով, և, իհարկէ, մեր սէրն էլ կսառի:

— Չէ՞ որ քո զրած ժամանակն է, սիրելի Կսենթէն, ասաց խղճահարուած Աֆրոդիէն, ուրեմն այդպէս է, եկ, եթէ քեզ վայել է և այրական փառք ու պատուի արժան է:

Այս խօսքերից յետոյ՝ մտան ննջարանի դուռը փակուեց մինչև առաւօտեան արևի բարձրանալը:

Զուժութիւնը առաւօտեան վաղ վերկենալով թէյ պատրաս-

տեց: Աֆրոդիէն սովորական ժամանակից շատ ուշ վերկացաւ այժմ, որ և արժէր:

Համարեա կէսօրին մօտ էր, երբ վերկացան լուացուեցան հագնուեցան և նստեցին սեղանի շուրջը թէյ խմելու:

Մի քանի րոպէից յետոյ թէյ բերուեցաւ:

Բաքէի սիրտը այնպէս էր ուրախացել, որ կարծում էր թէ ամբողջ երկրագնդի վրայ զանուած արարածների իրաւունքը իրանն է: Սա աւելի փառաւոր նստած թէյը խմում էր, Աֆրոդիէի հետ փաղաքշանքով խօսում:

— Սիրելի Աֆրոդիէ, ես պիտի դուրս գնամ քաղաք տեսնեմ մեր հին ծանօթներին և բարեկամներին, բայց նախ քան դուրս գալս, պիտի ճաշենք միասին, որ դուրս գնալուց յետոյ այլ ևս չեմ ուզում վերագառնալ ինչպէս մեր պայմանն է, որ այն է՝ մի զիշեր մնալ:

— Ինչպէս չէ՞, որ պիտի վաղը դուրս գնաս այստեղից:

— Այո, վաղը, բայց քաղաքից կ'ճանապարհուիմ առաւօտը. իսկ մէկ էլ քեզ մօտ դալ յետոյ դուրս գնալ, դա իմ պայմանից դուրս է, պաշտելիդ իմ Աֆրոդիէ, որովհետև ուխտած եմ տարեկան մի զիշեր միայն մնալ մօտդ:

— Ինչպէս քո կամքն է, սիրելիս, ուխտդ պահպանիր:

Աֆրոդիէն հրամայեց ճաշը պատրաստել:

Վերջապէս ժամանակին ճաշեցին, վերջացնելուց յետոյ Բաքէն վերկացաւ համբուրեց երկու երեխաներին, զրկախառնուեց Աֆրոդիէի հետ սկսեց սիրոյ համբոյրներով ծածկել երեսը, մնաս բարեաւ ասելով հեռացաւ առանց մի որ և է պատուէր տալու աղախներին, մինչդեռ Կսենթէնը ամեն գնալու ժամանակ կարգադրում էր ամեն ինչ: Բաքէի հետ հեռացան և Աֆրոդիէի ուրախ ու երջանկութեան վերջին րոպէները:

Սովորականին Աֆրոդիէն կանչեց իրան մօտ բոլոր նախնիներին, յայտնեց որ երեկոյեան բոլորը միասին թէյ խմեն: Իրիկնագեմին թէյը պատրաստ՝ բոլորը շրջապատուած դահլիճի մէջ տեղ դրած զարդարուն սեղանին՝ խմում էին և

ծիծաղում: Իսկ ընթերցում միջոցին՝ որ բաւական անցել էր, ձայն լսուեց, թէ Կսենթէնը գալիս է:

Այս լուրը լսեց Աֆրոդիէն, սիրտը սկսեց դողալ և ասաց նաժիշտներին. «Այս ի՞նչ հրաշք է, չէ՞ որ Կսենթէնը երէկ եկաւ, այսօր «մաս բարեաւ» ասելով գնաց»:

Աֆրոդիէի հարցին պատասխանող չկար. բոլոր նաժիշտները տխրուած դուրս վազեցին, որովհետեւ բակում արդէն կանգնած էր դժբախտ Կսենթէնի կառքը, որից խակոյն ցած էր եկել ուղղուել դէպի վերնայարկը:

Կսենթէնը Աֆրոդիէին տեսնելուն պէս, զրկաբաց մօտ գնաց ըստ սովորութեան զրկելու. բայց Աֆրոդիէն խոյս տուաւ ասելով. «Սիրելի Կսենթէն, մինչև որ ինձ չասես պատճառն ի՞նչ է, որ մէկ երէկ եկար, մէկ էլ այսօր, չեմ կարող մօտենալ քեզ, այդ ի՞նչ տեսակ ամուսնական սէր, հաւատարմութիւն է»:

Այս խօսքերը կայծակի արագութեամբ սրի պէս ցցուեցան Կսենթէնի անմեղ սրտի խորքերը, որ սա էլ խակոյն չք կարողանալով մի որ և է խօսք արտասանել և մի քիչ կանգ առնելուց յետոյ՝ խղճահարուած պատասխանեց.

— Ինչպէս, Աֆրոդիէ, մի՞թէ ես երէկ էլ եմ եկել:

— Այո, ինչպէս չէ, չէ՞ որ երէկ այս ժամանակ եկար և այսօր կէսօրին էլ ճաշելուց դուրս գնացիր ինձ միամիտացնելուց յետոյ. մի՞թէ փորձում ես ինձ:

— Ժշմարիտ է, Աֆրոդիէ, ասաց Կսենթէն առանց շփոթելու, որ կարողանայ բոլոր անցքը հանդարտութեամբ իմանայ:

Բայց հագուստի մէջ աչքի ընկնող զանազանութիւն չը կար, որ Աֆրոդիէն հեշտութեամբ կարողանար իմանալ:

— Լաւ, Աֆրոդիէ, փնտռեմ, այս երեկոյ էլ եկել եմ, հիմա ինձ խօ չե՞ս փախցնիր. թող այս զիշեր փնտռեմ:

— Այդ ի՞նչ խօսքեր են, սիրելիդ իմ Կսենթէն, մի՞թէ ես ոտ լինելով կարող եմ արհամարհել կամ դուրս անել իմ գլխին, որը դու ես, այն էլ քո հայրենի տնից:

Կսենթէնը դառնալով Զուսրութին ասաց. «Զուսրութ,

այդ իրերը թող ֆնան տեղն ու տեղը առանց շարժելու, որովհետեւ դրանք պիտի դարձեալ յետ գնան»:

Եւ Աֆրոդիէի հետ մտաւ ննջարանը, հաստատ իմացաւ, որ նախընթաց երեկոյին եկել է խաբէութեամբ մի ոմն սանդարամետի ժառանգներից ու առանց իմացնելու Աֆրոդիէին իւր միտքը, մտաւ դահլիճը, փակեց բոլոր դռները, պատուհանները, որ ոչ ոք չիմանայ թէ ինչ է անում, նստեց սեղանի մօտ և զրեց հետեւեալ նամակը:

«Ամենագեղեցիկ Աֆրոդիէ.

Աստուած պարգեւել է քեզ երեք արու զաւակ մէկը մէկից մի տարով մեծ, որոնք շատ սիրով են եղել միմեանց հետ: Բայց ինչպէս սովորութիւն է աշխարհի, որ եղբայրները բաժանուում են միմեանցից, այնպէս էլ մեր որդիքը-քո զաւակները պիտի բաժանուին. բայց իմացիր, որ դրանցից մէկը պիտի զրկուի իր հայրենի հարստութիւնից ու անբաժին հեռանայ միւս երկու եղբօրցից, որին դու կ'հեռացնես միւս երկուսից իմ բոլոր հարստութիւնս կտաս երկուսին: Այս կարգադրութիւնը դու ինքդ արա, որ ձայն չբարձրանայ աշխարհում. իսկ այլ ևս չեմ երեւալ քեզ. այս է իմ վերջին պատուէրը»:

Այս նամակը զրեց, փակեց, ծրարի վրայ գրեց հետեւեալը.

«Աֆրոդիէ, այս նամակը կ'բանաս, երբ որ որդիքներդ կ'դառնան 24, 25 և 26 տարեկան. իսկ մէջը գրածները կը կատարես հեշտութեամբ: Ուրեմն եթէ դէպի ինձ սէր, ամուսնական յարգանք ունիս, պահիր սրբութեամբ իմ պատուէրներս. այս նամակը ապահով տեղ պահիր մինչև 25 տարին, այնուհետեւ պիտի բաց անես այս ծրարը ու կարդաս»:

Կսենթէնը նամակը պատրաստեց յետոյ՝ դուրս եկաւ Աֆրոդիէի մօտ, որը այդ ժամանակը հասկանալով իր սխալը՝ ձեռքը նեցուկ տալով կոլը կզակին, ցած գցած՝ մտածում էր, ասաց. Սիրելի Աֆրոդիէ, այժմ քեզ յայտնի է ամեն ինչ և չք վհատուիս մինչև քո վերջին բաժնի. առ այս նամակը պահիր մօտդ մինչև այն ժամը, որպէս գրած է այս ծրարի վրայ, չես

բանայ մինչև քսանեւհինգ տարի, ինչպէս գրած է միայն երբ
ես միտդ ընկնեմ, վերցրու այս ծրարը կարդա. բայց ժամա-
նակը լրանալուց կ'բանաս կ'կարդաս նամակը. ցոյց կտաս որ-
դոցդ, որ իրանց հօր գրած կտակն է. ոչ ոք չ'հակառակէ, չը
կռուին: Աստուած ինքն ցոյց կտայ նրանց ուղիղ ճամպան-
միայն դու կարող ես բաժանել նրանց իմ կայքը՝ ինչ գրած կլի-
նի. մնաս բարեաւ յաւիտեան, այլ ևս չ'մտածես իմ մասին»:

Այս խօսքերը ասելուն պէս՝ Կսենթէնը դուրս եկաւ տնից
առանց ոչնչի բացի իր հետ բերածը, այլ ևս յետ չ'նայեց:

Ի՞նչ կլինէր այս լուպէին Աֆրոդիէի դուռթիւնը, սիրելի
ընթերցող, ով ընկել է, ով քաշել է բնատուր օրինաց ծանր
պահանջները, նա կիմանայ: Աստուած համբերութիւն տայ
սրտաբեկ Աֆրոդիէին, մսիթարէ նրա ազնուութիւնը:

Այդ օրից անդարձ հեռացաւ Կսենթէնը, որի հետ ան-
ջատուելով հեռացել էր և ամուսնական սէրը:

Այն օրից սկսած Աֆրոդիէն սեւ հագաւ, ողբում էր իր սե օրը:
Այդ դառն օրը նա բերաւ և երրորդ օրդին՝ կոչեցին Բաքէոս*)

Վերջապէս լրացաւ քսան և հինգ տարին՝ Կսենթէնի դրած
ժամանակը: Աֆրոդիէն ամենայն սրբութեամբ պահել էր տու-
ած պատուէրը, ծրարը առանց բանալու: Իւրաքանչեւ, Յարիսը և
Բաքէոսը մեծացել և դառել էին ամեն մէկը մի հսկայ: Իրանք
այդ ժամանակ չուզեցին միմեանց մօտ մնալ, ցանկանում էին
բաժանուել. այդ իսկ պատճառով յաճախակի վիճաբանում
էին միմեանց հետ:

Մի օր՝ երբ նրանք սաստիկ վիճում էին իրար հետ և
ոչ մի կերպ չէին յարմարւում, Աֆրոդիէն մտաբերեց իր անց-
եալը, մօտ գնաց վերջ տալ այդ վիճաբանութեան, հանեց ծը-
րարը այն սնդուկից, ուր պահւում էր թանկագին քարերը
և Կսենթէնի ընծայ ուղարկած նոսները. ինքը կարդալուց յե-
տոյ՝ որ համարեա ինքո լաւ չէր հասկացել նամակի բովան-

*) Այս անուանակոչութիւնը անգիտակցաբար էր, իսկ Աֆրոդիէն մինչև իր մահն
չիմացաւ, թէ ով եղաւ իր խտրողը, թէև շատ էր ցանկանում տեսնել, վրէժն առնել:

դակութիւնը, տուաւ մեծ որդուն: Սա էլ նամակը կարդաց
ու եղբօրցը ասաց. «Սիրելի եղբարք, մեր վիճաբանութիւնը
բոլորովին զուր է, մեր հայրը մեզանից մէկին զրկում է իր կայ-
քից, իր ձեռքով գրած կտակով. այդ մէկը ո՞րն է, անհասկանալի է»:

Բոլորը հետզհետէ կարդում են. բայց չեն իմանում թէ
զրկվողը որն է, որ միւս երկուսը միասին ապրեն:

Այդ կտակագրով շատ մարդկանց են զիմում. բայց ոչ
ոք չէ կարողանում բացատրել միայն մի քանիսը հասկանում
են, որ երեք եղբօրց մէկը հարազատ հօրից չէ և իմանալով
հայրը այդպէս է կտակել, տակաւին չէին իմանում թէ որն է
անհարազատ որդին, որին որ չ'պիտի դուռի բաժին:

Վերջը շատ այս ու այն կողմն են ընկնում, չեն կարո-
ղանում իմանալ, վճռում են գնալ Քաղքիս քաղաքը, որտեղ կայ
մի արդարադատ դատաւոր, որ նա միայն կարող է վճռել:

Այս հիման վրայ մեծ որդին՝ Իւրիսը ներկայանում է մօրը
առանձին ասում. «Սիրելի մայր, ես արդէն քսան և եօթը
տարեկան եմ, երբէք չեմ մերժել քո խօսքերից ոչ մէկը. իսկ
այժմ համարձակաբար դիմում եմ քեզ՝ խնդրեմ ասես հաս-
տատ թէ մեզանից ո՞րն է հայրենի կայքից զրկվողը. մենք ե-
րեքս էլ զիտենք, որ մեզանից մէկը հօր հարազատ որդի չէ,
այդ պատճառով էլ հայրը վճռել է նրան զրկել. ասա ճշմա-
րիտը, եթէ ոչ հակառակ դէպքում պիտի երեքս գնանք Քաղ-
քիսի դատաւորի մօտ, որ թէ մենք, թէ դու կ'պախարակուինք»:

Ի՞նչ սրտակտոր բօթ, յանդիմանութիւն հարազատ որդու
կողմից. ի՞նչպէս շիտակ պատասխան տար այդպիսի մի մահա-
ռիթ հաբցի, որը արատաւորում էր իր պատիւը, պատասխանեց.

«Սիրելիդ իմ Իւրիս, իմ անդրանիկ զաւակը դու ես, իմ
կենաց հրեշտակ, գիտե՞ս որ առհասարակ անդրանիկները հա-
րազատ են լինում, ինչ՞ու ես կասկածում. իսկ բացի այդ չ'կայ
ձեր մէջ և ոչ մէկը:

Իւրիսը տեսաւ որ մօր ասած առաջին խօսքերը տեղի
են քան վերջինը, այլ ևս ոչինչ չ'խօսեցրեց մօրը. այլ դուրս

գալով խորհրդակցեց եղբորց հետ, հետեւեալ օրը երեքը միասին ճանապարհ ընկան Քաղքիս՝ տանելով իրանց հետ և հօր գրած կտակագիրը։

Դ. Գրաւոր խորհրդակցեց եղբորց հետ, հետեւեալ օրը երեքը միասին ճանապարհ ընկան Քաղքիս՝ տանելով իրանց հետ և հօր գրած կտակագիրը։

Գարնանային եղանակ էր։ Ամեն տեղ ցնծին էր տալիս գեղեցիկ թաւշանման կանաչը։ Զուարճութիւնը թաղաւորել էր բնութեան վրայ։

Այն առաւօտը՝ որ նրանք ճանապարհ ընկան, արեգակը պայծառ փայլում էր, իսկ գարնանային ցօլը այնքան առատ էր, որ ճանապարհները թեթեւ ցեխացել էին, այնպէս որ՝ ճանապարհում կենդանեաց հետքերը պարզ նշմարւում էին։

Երբ նոքա բաւական ճանապարհ էին անցել, պատահեց նրանց մի գիւղական և հարցրեց.

— Եղբարք, ձի չէք տեսել ճանապարհին։

— Զիտու յետի ոտից մէկը պայտից զուրկ էր, հարցրեց Իւսիւր։

— Այո՛, աղա, զուրկ է եղել։

— Զեմ տեսել, եղբայր։

— Զիտու աչքի մէկը՝ այն էլ ձախը կոյր էր, հարցրեց Յարքիս։

— Այո՛, պարոն, այդպէս է եղել։

— Զեմ տեսել, ասաց ու անվրդով առաջ անցաւ։

— Զիտու բեռի մի հակը գինի էր միւսը ձէթ, ասաց Բաբէնուր։

— Այո՛, այո՛, սիրելի տէր, հենց այդպէս է։

— Զենք տեսել, եղբայր, պաշտ Գնա ու որոնիր ձիուդ։

— Ախր ի՞նչպէս չէք տեսել, բարեկամք, քանի որ իմ ձիու նշանները ձեր բոլոր ասածներն է։

— Քեզ ասում ենք թէ չենք տեսել, Գնա դարձեալ ասում էմ, ձիուդ ման եկ գտիր, բարկացած ասաց Բաբէնուր։

— Ես ուղղակի կ'գնամ դատաւորի մօտ դանդաժուելու։

— Գնա, հենց մենք էլ գալիս ենք այնտեղ, ասաց Բաբէնուր։

Իժբախտ գիւղացին այլ ևս ոչինչ ասել չ'համարձակուե-

լով, զուրկ միայն շարժելով առաջ անցաւ։

Սա գալով դատաւորի մօտ, յայտնեց իր գանգառը, որ երեք մարդ, որոնք գալիս են դատաւորի մօտ, տեսել են ձիուն, հաւանական է, որ նրանք տեղը իմանան, բայց բացասում են։

Նրանք ևս ներկայացան դատաւորին։ Դատաւորը առաջ սկսեց զիւղացու դատը վճռել և հարցրեց Իւսիւրից։

— Դու ի՞նչպէս իմացար, որ այս մարդու ձին մի պայտից զուրկ է եղել, բայց ինքդ չես տեսել։

— Տէր դատաւոր, որովհետեւ ճանապարհը մի քիչ ցեխացած էր, և ձիու հետքերը նկատուում էին, տեսայ որ յետի ոտերից մէկի տեղը առանց պայտի էր, իսկապէս ձիուն չենք տեսել։

— Դու ի՞նչպէս իմացար, որ ձիու ձախ աչքը կոյր է. դարձաւ Յարքիս։

— Ես ևս չեմ տեսել ձիուն, բայց ճամպի մէկը ափի կանաչ խտրը արածել էր, իսկ միւս ափից մի խոտ անգամ չէր կծել, այդ պատճառով ես էլ գիտեմ, որ կոյր է եղել մի աչքով։

— Հապա, դու ասա, ի՞նչպէս իմացար բեռը գինի և ձէթ լինելը, հարցրեց Բաբէնուր։

— Արդար, դատաւոր, ճանապարհին ես տեսայ, որ մի կողմով գինի, միւս կողմով ձէթ էր կաթկաթած. այդ հիման վրայ ես էլ իմացի. բայց մենք ձիուն ականջը անդամ չենք տեսել։

Դատաւորը զարմանալով սրանց տարօրինակ պատասխանի վրայ, դարձաւ զիւղացուն ասաց. — Ծատ հաւանական է սրանց տուած պատասխանները. սոքա քո ձին չեն տեսել ուրեմն Գնա որոնիր ձիուդ քանի որ ուշ չէ դեռ ևս։

Խեղճ գիւղացին ինքը ևս զարմանալով նրանց տուած պատասխանի վրայ, առանց դժգոհանալու դատաւորի վճռից, գուրս եկաւ դատարանից և մտածելով ձիու յետեւից Գնաց։

Դիւղացին գուրս գնալից գինի՝ դատաւորը դարձաւ դէպի եղբայրները համեստ հարցերով։

— Հիմա ասացէք, սիրելի պարոններ, ի՞նչ ունիք ասելու։

Բարի դատաւոր, ասաց Իւսիւր, մենք երեքս եղբայր ենք.

մենք մեր մանկութիւնից մեր հարազատ հօրը չենք տեսել։
մեր մօր խնամակալութեան ներքոյ ենք մեծացել։ Այժմ կա-
մենում ենք բաժանուել, ինչպէս ընդհանուր կանոն է, բայց
մեր հօր կտակը յարգելու և նրա յիշատակը անմոռաց պահելու
համար՝ ցանկանում ենք նրա խօսքով բաժանուել, որ մենք
չկարողացանք վճռել շիտակ՝ ահա կտակը ներկայացնում ենք
մեծապատուութեանդ՝ հայցելով ձեր արդար վճիռը։ Ասաց
ու հօր գրածը տուեց դատաւորին։

Դատաւորը կարդաց նամակը. կարդաց երկրորդ, երրորդ-
անգամ, բայց չհասկացաւ։ Մտածեց երկար ժամանակ. դարձ-
եալ անօգուտ։ Դատաւորը տեսաւ որ հեշտ վճռելու հարց չէ,
ասաց. «Ձեր դատը այժմ վճռել կարող չեմ. գնացէք իմ սեն-
եակներիցս մէկում սպասեցէք, վաղը կ'վճռուի»։

Նրանք լուռ ու մունջ դուրս գնացին պատշգամբ, որտե-
ղից դատաւորը ցոյց տալով նրանց մի շքեղ զարդարած սենեակ,
ասաց. «այստեղ մնացէք մինչև առաւօտ, ձեր թէյն, ընթրիքը
կ'ստանաք ըստ արժանոյն այստեղ, իսկ դատը կ'վճռուի վաղը»։

Նոքա գնացին դատաւորի ցոյց տուած սենեակը։

Երեկոյեան ժամանակ թէյ բերուեց, խմեցին ախորժակով։
Ընթրիքի հետ բերին մի կաւ գինի, երեք բաժակի հետ, իւ-
րաքանչիւրին մի աման փլաւ (բրնձով ձաշ) նմանապէս և միւս
սեղանապատկան սննդարար պիտոյքը ըստ կարգին։

Ընթրելու ժամանակ դատաւորն մերձակայ պատուհանի
տակ նստած լսում էր նրանց բոլոր խօսակցութիւնը։

Նրանց խօսակցութիւնը հետեւեալն էր. երբ սկսեցին ու-
տելու՝ Իւխը վերցրեց գինու բաժակը՝ ասաց. եղբարք, այս
գինուց դեղին պղնձահոտ է գալիս՝ երբ մօտեցնում եմ բերանիս։

— Մեր ձաշից մարդի արեան հոտ է գալիս, ասաց Յաբիսը։

— Դուք այդ էք ասում. իսկ ամենազղխաւոր բանը՝ որ մեր
դատաւորն ինքը իր հօր հարազատ զաւակը չէ. դրա վրայ չէք
մտածում և նա մեր դատը արդար վճռելու բնադնութիւն չունի։

Այս խօսքերը մանրամասն լսում էր դատաւորը։ Վերջին

խօսքերը լսելուն պէս ոտերը սկսեց դողար։ Սիրտը կոտրուած՝
վերկացաւ մտաւ խոհանոց, խոհարարին ասաց. թէ իրաւ գինուց
պղնձէ հոտ է գալիս և ձաշից արեան։ Գինու տիկը պտրտեցին
սեսան, որ մի հատ գեղնապղնձէ բանալի տկի մէջ է։ Խոհարարն
ասաց, կերակրի տակ զցելու ձուն կոտրելու ժամանակ ձուի կէպն
իր մատը կտրել է, արիւնից երկու անգամ կաթել է կաթսայի մէջ։

Դատաւորի լեզուն կտրեց, խոր մտածմունքի մէջ մտաւ
իր առանձնասենեակը, նստեց սեղանի առաջ, քիչ մտածելուց
յետոյ կանչեց մօրը իր մօտ, ասաց այն բոլոր խօսքերը, ինչ
որ նրանցից լսել և փորձել էր ստոյգը իմացել. խնդրեց մօր,
որ ճշմարիտն ասէ իր անհարազատ լինելն ու չ'լինելն։

Մայրն խոստովանուեց բոլոր ճշմարտութիւնը։

Մայրը տխրուած դուրս գնաց։ Դատաւորը մեզ ծանօթ
կտակը ձեռին մտաւ դաշիւձը, որտեղ էին նրա բոլոր գերդաս-
տուները, ասաց. «Իմ անկողինս պատրաստեցէք ես պառկեմ.
Իսկ այն երեք եղբայրքը որ ինձ պահանջեն, ասացէք հիւանդ
է, մինչև ես մտածեմ դրանց դատը վճռելու»։ Թուղթը սե-
ղանի վրայ զցելով՝ գնաց պառկեց անկողնի մէջ։

Դատաւորը մի տասն և վեց ամեայ աղջիկ ունէր, որը էր
ուսեալ ըստ ժամանակի պահանջման։

Սա հօր տարակուսութիւնը տեսնելով՝ մօտ գնաց հօր ու
ասաց. «Սիրելի հայր, ի՞նչ ես այդքան տխուր մտածում ան-
դադար, ասա ինձ նրանց գանգատը, որ կարողանամ մի բան
մտածեմ դրա համար»։

— Սիրելի Քսենիֆօն, այսպէս էր աղջկայ անունը, ահա
նրանց գանգատի թուղթը, վերցուր կարդա, մի որ և է
ինչ մտածիր նրանց գանգատի վերաբերեալ։

Քսենիֆօնը կարդաց թուղթը գնաց ինքը ևս մտածելու։

Այդ գիշեր աղջիկը մտածեց միտը բերաւ, միմեանց սրտով
նուիրուած սիրահարների առակովը դատէ նրանց դատը։

Քսենիֆօնը առաւօտեան գնաց հօրը մօտ, որ սրտի յուզ-
մունքից և իր անհամբերութիւնից ծանր հիւանդացել էր և

ասաց. «Միրելի հայր, այժմ ինչպէս է առողջութիւնդ»:

— Բոպէ առ քոպէ դէպի ծանրութիւն եմ գնում, աննմանդ իմ Քսենիֆօն, միայն չ'զիտեմ ի՞նչ պատասխանեմ այն մարդկանց:

— Հայր, թոյլ տուէք ինձ այդ մարդկանց դատը վճռելու, որով և քո սրտացաւը բուժելու:

— Արա, աղջիկս, ինչ որ քո կամքն է, միայն այնպէս որ չ'բարկացնես նրանց, նրանք պատուելի անձինք են երևում:

— Աղջիկը ուրախացած դուրս թռաւ մաները հօր առանձնասենեակը իր վճռման ծրագիրը կազմէ, թէ ինչ հարց տայ նրանց:

Խատարանի բացման ժամանակին երեք եղբայրները գնացին դատարանի դահլիճում սպասեցին դատաւորի գալստեան:

Համարեա կէս ժամից յետոյ շքեղազարդ պճնուած օրիորդը ներս մտաւ առանձնասենեակից դատարանի ամբիոնը, ուր նստեց դատաստանական աթոռի վրայ նշնապէս դատաւորական նշաններով կուրծքը գեղեցիկ զարդարած: Նրա երկու կողմումը տեղաւորուեցան դատաքննական անդամները, որոնք պէտք էր նկատէին դատի արդար կամ անարդար վճռելը ու յայանեցին իրանց կարծիքը դէպի արդար կողմը:

Երեք եղբայրների զարմացմանը չափ չ'կար. «Այս ի՞նչ հըրաշք է, մի թէ մեր դատը այս աղջիկը պիտի վճռի», ասում էին:

Թէև աղջիկը մինչ այդ ժամանակ դատ չէր վճռել, բայց շատ անգամ դժուար դէպքերում օգնել էր հօրը:

Քսենիֆօնը կանչեց նրանց հարցրեց. «Ի՞նչ ունիք ասելու. այսօր հայրս հիւանդ է, ես պիտի վճռեմ ձեր դատը»:

Նրանք վերկացան տեղներից, մօտ գնացին օրիորդի առաջը կանգնելով խոնարհութեամբ զրուի տունն ու Իւլիսը ասաց. «Պայծառափայլ օրիորդ, մեր ասելիքը կարծեմ ձեզ յայտնի է. մենք երեքս եղբարք ենք և պէտք է բաժանուենք. բայց մեր հօր կտակի համաձայն մեզնից մէկը պիտի զրկուի մեր հօր անհուն հարստութիւնից: Ուստի մենք ուզում ենք իմանալ այստեղ, թէ մեզանից ուր պիտի զրկուի:

— Շատ բարի, ահա և ձեր հօր զրաճը, որը տուել էք հօրս

ցոյց տալով կտակը, այստեղ էլ ձեր լաւածի պէս է զրուած. բայց ես պիտի ձեզ մի փոքր առակ—պատմութիւն առաջարկեմ, նախ քան իմ վճիռը՝ ձեր կարծիքը իմանամ, այնուհետև վճռեմ ձեր դատը: Դէ լսեցէք. «Մի քաղաքում ապրում էր մի շատ հարուստ մարդ, որը ունէր մի շատ գեղեցիկ աղջիկ:

Այդ աղջիկն էլ ուստալ էր և խելօք:

Պատահեց, որ մի ուսումնասու երիտասարդ յայտնուեց և ձայն գցեց թէ ուզում է այդ աղջկան. բայց պէտք է ասած՝ որ այդ տղան շատ աղքատ էր, համեմատած աղջկայ հօր հարստութեան հետ և նշանեցին:

Քիչ ժամանակում տղան ու աղջիկը այնքան սիրեցին միմեանց, որ մի րոպէ չէին կարողանում առանց միմեանց մնալ:

Քիչ ժամանակից յետոյ յայտնուեց մի այլ երիտասարդ, որը դեռ աղջկայ հօրից էլ հարուստ էր և որը ցանկութիւն յայանեց ուզելու նոյն աղջիկը:

Հայրն էլ առանց հետեանքը մտածելու մերժեց նշանած աղային և նոր յայտնուածին ընդունեց:

Բայց ի՞նչ օգուտ, այն երկուսի սէրը այնպէս էր արմատաւորուել նրանց սրտում, որ մոռացնելը անհնար էր:

Անխոհեմ հայրը իր ասածն արաւ, աղջկանը ստիպեց հեռանալ միւս աղայից*):

Շատ ժամանակ չանցած առաջինին հեռացրեց և ընդունեց վերջինին: Բայց առաջի տղան ու աղջիկը այնպէս էին միմեանց սիրելի, որ ամեն զիշեր տեսնում էին միմեանց:

Այսպէս էլ մի անգամ ծածուկ խօսելու ժամանակ՝ աղջիկը խօսք տուեց իր սիրելուն, թէ իր կուսութիւնը իրանով պիտի առնուի, թէև մահի էլ ենթարկուի: Վերջապէս այս սիրահարները միմեանց չարժանացան: Աղջկանը ակամայ ամուսնացրին երկրորդ երիտասարդի հետ:

*) Այսպիսի տարօրինակ քանքի հենց այժմ էլ շատ կան. հայրերը անխնայ հեռացնելով սիրասուն զաւակի սրտի սէրն, իր ամենասիրելի ցանկութիւնը, ըստ սխալմամբ տալիս է նրա ատելի տղին, և շատերը մեռնում են սրտնեղութիւնից: Այսպիսի դէպքերում լաւ կլինի հայրը ընտրելու իրաւունքը տալ զաւակին:

Այն գիշեր, որ հարս ու փեսայ պէտք է առանձնանային, փեսային տարան հարսի մօտ, ուր նորահարսը ասաց իր ամուսին փեսային. «Եթէ դու ինձ անկեղծօրէն սիրում ես, սիրելի փեսայ, կատարիր իմ առաջին անկեղծ խնդիրը, իբրեւ հաւատարիմ ամուսնու առաջարկութիւն»:

— Ասա, սիրելի կենակիցս, ասա, հոգիս, ի՞նչ է խնդիրդ. իմացիր հաստատ, ինչ էլ լինի, պիտի կատարեմք խնդիրդ:

— Իմ խնդիրս այս է, դու քաջ զիտես, որ ես նշանած էի մի երիտասարդի հետ, որին այնչափ սիրում էի և այժմս էլ հաստատ սիրում եմ: Ես նրան խօսք եմ տուել, հաստատ ու անկեղծ խօսք, որ իմ առաջին գիշերը մի ժամ նրա հետ անցկացնեմ ու կուսութիւնս նրանով խախտուի և այս խօսքը այնքան է հաստատ, որ կամ պիտի կատարես թոյլ տալով ինձ գնալ նրա մօտ ու մի ժամից յետոյ դարձեալ դադարիս, որ այնուհետեւ ցմահ լինիմ քո հաւատարիմ ամուսինը, կամ պիտի այս ըստէն ինձ սրախողխող անես, որ կոյս մեռնեմ, այս է իմ առաջի խնդիրս:

— Ո՛հ, ինչքան դժուարաւիճիւ խնդիր... դա ի՞նչպէս կարող է լինել, հոգիս, որ այդպէս է, առ սուրը ինձ մաս-մաս կոտորիր և այնուհետեւ ինչ վճռել ես, արա:

— Դու ինչպէս իմ զրուխ, ինչպէս դատաւոր խնդրում եմ վճռել. կամ թոյլ տալ՝ կամ սպանել ինձ:

Նորափեսան շատ խնդրեց, աղաչեց որ մերժէ այդ ահաւակ չարագորշակ մտադրութիւնը, չեղաւ և ինքն վերկացաւ վառեց փոքրիկ լապտերը, նորահարսի ձեռքից բռնած՝ օր-խուր ու տրտում ախմայ տարաւ առաջուայ աղի տունը, որը շատ հեռու էր նրանց տնից: Երբ հասան վերջինիս տան՝ բակի գաւթից կանչեց ու դուրս բերաւ այն աղային, որը դեռ նոր էր պառկել քնելու ու համեստաբար ասաց. «Եղբայր, ահա, քո նախկին սիրուհին, որը սրտով քեզ էր նուիրուած. բայց ծնողները բռնի ամուսնացրին ինձ հետ: Առ այժմ նրան մօտդ, մի ժամ սէրութիւն արէք. ինչպէս

ձեր ուխտն է եղել ու դարձեալ բեր. իսկ ես այստեղ կսպասեմ մինչև ձեր ուրախութեան վերջը:

Առաջուան տղան տեսնելով որ աղջկը իւր խոստումը հաստատ է պահեր, նրա ամուսինն էլ նրա անկեղծ խօսքը չի մերժել, չի մացաւ թէ այդ տարօրինակ հանելուկը ինչպէս լուծէ և մնաց շուարած — կանգնած:

— Ահա ես իմ անմոռանալի սիրելիան, որ իմ խօսքիս անկեղծութիւնը քեզ ցոյց տարու հաւատարմութիւնս ապացուցում եմ ես իմ ամուսնուց երբեք չեմ բաժանուիլ, ինչպէս հայրենի սրբազան օրէնք, բայց քեզ տուած խօսքս էլ չեմ դրժում, որ ահա առաջդ պատրաստ եմ, կաաաւիր սրտիդ պահանջը ինչպէս քո խիղճը թելադրում է:

Սիրականից զրկուած երիտասարդը խղճահարուած՝ համբուրելով նորահարսի ձեռքերից՝ վճռողաբար ասաց. «Ահա, սիրելիք, իմ անելիքը, որ դու, իմ թանկագին նախկին սիրական, կլինիս իմ հարազատ քոյրս, կսիրեմք քեզ անկեղծութեամբ ցմահ ու կը յարգեմ. եղբոր պէս. իսկ քեզ, եղբայր, դառնալով դէպի փեսան՝ համբուրելով՝ հետք, կլինիս իմ եղբայրս դուք ձեր մարդութիւնն էք ցոյց տալիս, իսկ ես իմը՝ գնացէք խաղաղութեամբ, Տէր ընդ ձեզ, Աստուած ձեզ ցմահ ուրախ և անսասան պահէ անկեղծ սիրով:

Այնուհետեւ տղան վերցրած իր հարսը դարձաւ իրանց տունը, որ և կլինէր սխեց ցմահ սիրել անկեղծութեամբ մարդուն և մարդը կնոջը. իսկ առաջին տղան սիրում էր անկեղծօրէն այն հարսին քրոջ և մարդուն եղբոր պէս*):

Այժմ ձեզ եմ ասում, այդ երեքից, ո՞րն է անխիւ արդարադատը, հարսը, նրա ամուսինը, թէ հին փեսացուն:

— Աւելի ազնիւը աղջկին է եղել, որ իւր տուած խօսքին հաստատ է մնացել, ասաց Իւխոր:

— Աղնիւ է եղել նոր փեսան, որ ամարդութիւն չէ արել ու կնոջ անկեղծ խօսքին հաւատարմով՝ ինքը առանց դիմադրելու կենակցի խօսքին, անձամբ առաջնորդել է դէպի նրա ցանկալի երիտասարդի տունը, ասաց վճռողաբար Յարիսը:

*) Այսպիսի սէր կայ այժմ, որ մտադիր եմ գրել առանձին գրքով:

Նրանք բոլորն էլ յիմար են եղել. առաջինը կինը՝ որ առանց մարդուն յայանելու չի գնացել. երկրորդ՝ ամուսինը որ թոյլ է տուել կնոջ այդպէս անպատուութիւն գործել. երրորդ՝ մերժուած փեսացուն, որ դրժում է իր տուած խօսքը. ինչո՞ւ չէ կատարել աղջկայ ամենապատուական առաջարկութիւնը, քանի որ աշխարհիս ամենաերջանիկ լոպէն ամենայն արարածոց համար այդ տեսակ միջոցն է. իսկ յիմար տղան մերժում է այդ բարեպատեհ ցանկալի լոպէն, ասաց Բաքէն:

— Էաւ, դուք իմանում էիք իմանալ թէ ձեզանից ո՞րն է զրկւում ձեր հօր կայքից, անբաժին հեռանում, ասաց Քսենիֆօնը:

— Այո, պատասխանցին երեքն միաբերան:


— Ձեր հայրենի կայքից պիտի զրկված լինի ըստ կտակագրի ձեր հօր և իմ ղիտողութեան ձեր փոքր եղբայրը — Բաքէն: Այժմ դուք կարող էք հեռանալ և շարժուել դէպի ձեր կողմը, որովհետեւ այլ ևս ասելու ոչինչ չունիմ:

Բաքէնը, որ ինքը լաւ գիտէր զուրս գնաց իբրեւ մերժեալ և հեռացաւ եղբորցից յաւիտեան, իրաւունք չունենալով այլ ևս վրդովելու միւս երկուսի խողալ վիճակը. իսկ Քսենիֆօնը կրկին իր մօտ կանչելով միւս երկուսին, հարցրեց. «ձեռաբքերի է ինձ տեղեկանալ թէ ո՞ր աշխարհից էք և ո՞ւմ որդիք»:

— Մենք, արդարադատ օրիորդ, Տիւթամօր քաղաքից ենք: Մեր հօր անունը Կսենիթէն էր, որին մենք չենք տեսել մեր ծնուած օրից, մեր պապի անունը Արնէ է եղել. իսկ մեր մօր անունը Աֆրոդիէ, պատասխանեց Իւիսը:

— Այո, այժմ իմացայ, ես շատ լաւ եմ ճանաչում հօրդ և պապիդ: Ձեր երկրից շատ առևտրականներ դալիս են այստեղ ձեզնից ու քո հօր տպրուստից պատմում. Դու, Իւիս, շատ ազնիւ երիտասարդ ես երևում, միա մի բանի օր մեզ մօտ իբրեւ հիւր, այնուհետեւ կգնաս, իսկ փոքր եղբայրդ թող գնայ:

Իւիսը Քսենիֆօնի խօսքին և զեղեցիկութեանը հաւանելով՝ Յաբիսին զրկեց տուն և ինքն այնտեղ մնաց մի ամսաչափ և վերջը Քսենիֆօնի հետ ամուսնանալով վերադարձաւ իր երկիրը, սկսեց հայրենի տան յարկի տակ երջանիկ ապրել իր հարազատ եղբոր, ատելի մօր և սիրելի կնոջ հետ ցմահ:



Գինը 15 կուպէկ

421

18461

2013

